

Գերմանացի հայտնի հայագետ Հայրիխ Հուրշմանի «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում» հոշակավոր հոդվածը շրջադարձային նշանակություն ունեցավ հայագիտության մեջ: Այն հիմք դրեց հայերենի՝ հնդեվրոպական անկախ լեզու լինելու տեսությանը և ուրվագծեց հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության հետագա ուղին: Աշխատությունն ալսօր էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը և կարևոր է հատկապես հայերենի ուսումնասիրության պատմության տեսակետից:

Հոդվածն առաջին անգամ տպագրվել է 110 տարի առաջ՝ 1873 թ. „Kuhn's Zeitschrift für vergleichende Sprachforschung“ հանդեսի 23-րդ համարում: Մյունխենում առաջին անգամ ներկայացվող թարգմանությունը կատարված է Heinrich Hubschmann, Kleine Schriften zum Armenischen, Herausgegeben von Rudiger Schmitt (New York, 1976) գրքից:

Մավալային նկատառումներով լեն տրվում հոդվածի երկու հավելվածները՝ «Աֆղաներենի մասին» և «Հին հայերենի, լիկերենի և փուլգերենի մասին», որոնք ունեն միայն պատմական նշանակություն: Թարգմանության մեջ պահպանված են հնդինական տառադարձությունն ու պայմանական նշանները, լեզուների անվանումներն ու օգտագործված գրականության համառոտագրությունները: Միայն հայերենի նյութը ներկայացվում է հայկական այբուբենով:

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԻՐՔԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հ. ՀՅՈՒՐՇՄԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկա հոդվածում միայն խմբագրության որոշակի պահանջով է, որ, բացի ստորև բերվող մի կետից, ես հետևել եմ զենդերենի՝ Յուստիի կողմից տրված նկարագրությանը, որից ես հատկապես այս հոդվածում կուզենայի շեղվել: Այդ նկարագրությունը, ինչպես Յուստին ինքն է նշում քրդերենի շփական բաղաձայններին նվիրված իր հիմնալի հոդվածի սկզբում, ունի այն պակասությունը, որ այնտեղ իրանական շփականները ներկայացված են ճիշտ այնպես, ինչպես հնդկերենի շնչեղները (օր. սնս. dirgha «երկար» = դենդ. daregha, այսինքն՝ dareya իրանական darga-ից, հ.-ե. dargha), և համապատասխանության տպավորություն է ստացվում այնտեղ, ուր հնչյունական տեսակետից խոր տարբերություն կա: Այդ պատճառով ներկա հոդվածի ընթերցողները պետք է ուշադրություն դարձնեն այն բանին, որ այստեղ բաղաձայն + h կապակցությամբ ներկայացվող իրանական հնչյունները միշտ արտասանվելու են որպես շփականներ: Այդ շփականներից ձայնեղները առաջացել են բավական ուշ՝ այն բանից հետո, երբ վաղուց արդեն նախկին շնչեղ-ձայնեղները նույնացել էին պարզ ձայնեղների հետ: Այն ժամանակ, երբ այսպիսով իրանական (ինչպես նաև սլավոնալիտական) լեզուները իսպառ պրկվել են շնչեղ-ձայնեղներից, սանսկրիտում նրանք միայն որոշակի զեպքերում են դարձել պարզ ձայնեղներ, օր.՝ այն արմատների սկզբում, որոնց վերջում նույնպես շնչեղ-ձայնեղ կա: Այսպես, հնդկերենում dhugh-ից պետք է առաջանար dugh կամ duh, իսկ իրանականում՝ duσ. այսինքն՝ համաձայն հնչյունական տարբեր սկզբունքների: Հետևաբար արիական հիմք-լեզվի համար պետք էր վերականգնել միշտ dhugh (և ոչ թե duh, ինչպես Ֆիկին է անում), dhrug և ոչ թե druḥ, bhadh և ոչ badh և այլն, բանի որ շնչեղներից պարզ ձայնեղների առաջացման մեջ դիտվող համապատասխանությունը ոչ թե նախնական է, այլ ստացվել է ավելի ուշ և պատահականորեն: Ի դեպ նրշենք, որ Ֆիկը սխալվում է նաև այնպիսի նախաձևեր առաջադրելու մեջ, ինչպես darçti «տեսք», սնս. drshti = զենդ. darsti-ից: Յուստիի s-n (տե՛ս նրա ձեռնարկը, էջ 362, § 59) միշտ ունի sh-ի արժեք, այդ պատճառով ճիշտ

կլինի ոչ թե darsti, այլ darшти, և այդ պատճառով էլ որպես արիական նախաձևեր պետք է կանխադրել daushan փխ. dausan, drâghishta փխ. draghista, daksh փխ. daks, dvish փխ. dvis, parshti փխ. parsti, yashtar փխ. yaçtar, rishta փխ. riçta, ashtan փխ. açtan և այլն: Պետք է նաև զնն-դերենում Յուստիի с-ի փոխարեն s և s-ի փոխարեն sh կամ sh' գրել, ինչպես ևս եմ վարվում այստեղ՝ այդ sh'-ն հնչյունապես դրանից հավանաբար շատ քիչ զանազանվող մի այլ sh-ից գրությամբ տարբերակելու համար:

Հայերենի նկարագրության մեջ ես միայն մասամբ են հետևում Ֆր. Մյուլլերին. գրելով kh փխ. q-ի, dz փխ. z-ի, ts փխ. ç-ի, j փխ. sh-ի, l փխ. p-ի, ç փխ. kh-ի, v փխ. w-ի և w¹ փխ. ou-ի: Մյուլլերի տառադարձությունից այս շեղումները ես կհիմնավորեմ, երբ (այստեղ կամ մի այլ տեղ) կանգնադառնամ հին հայերենի արտասանության և նկարագրության հարցին ամբողջությամբ վերցրած:

Ցեղակից լեզուների շրջանում հայերենի տեղը ցույց տալու իմ փորձը առաջինը է: Հայերն իրենք այդ մասին առաջ են քաշել տեսակետներ, որոնք շոյում են նրանց ազգային փառասիրությունը, բայց որոնք զուրկ են գիտական որևէ հիմնավորումից, իսկ նախորդ դարերի եվրոպացի գիտնականները՝ այդ լեզվի հետ ինչ ասես արել են, քանի որ չգիտեին, թե ինչ անեն: Սակայն Բոպպի կողմից լեզվաբանության հիմնադրումից անմիջապես հետո իր Հայոց լեզվի քերականություն (Բեռլին, 1837) աշխատության սկզբում բերված ստուգաբանությունների հիման վրա Պետերմանն արդեն կարողացավ ապացուցել, որ հայերենը հնդեվրոպական լեզու է: Դրանից 9 տարի հետո, 1846 թ. Վինդիշմանը Պետերմանից միանգամայն անկախ Բավարական ակադեմիայի աշխատությունների ժողովածուում (IV, 2) հրատարակեց մի արժեքավոր հոդված հայերենի մասին, որտեղ նա գալիս է այն եզրակացության, որ հայերենը ծագում է մի հին բարբառից, որը ըստ նրա պետք է մեծ նմանություն ունեցած լիներ զենդերենին և հին պասկերենին, և որին, սակայն, դեռևս վաղ շրջանում օտար տարրեր են միացել: Մինչ Պոտտը կասկածում էր, արդյո՞ք հայերենը արիական լեզու է, թե ոչ, և միայն ուզում էր հայերենի վրա արիական ուժեղ ազդեցության փաստը ապացուցել, Դիֆենբախը, դրան հակառակ, այդ ենթադրությունը բավարար չհամարեց հնդկերենի և պարսկերենի հետ հայերենի սերտ կապը հաստատելու համար, մի տեսակետ, որին միացավ նաև Գոշեն «Հայոց լեզվի և ազգության արիական բնույթի մասին» (Բեռլին, 1847) իր դիսերտացիայում: Դրանից երեք տարի հետո դը Լազարը Գերմանական արևելագիտական ընկերության ամսագրում (IV, էջ 347 և հաջ.) «Հայերենի և սանսկրիտի բաղաձայնների համեմատությունը» վերնագրի տակ տրվեց հայերեն 283 բառերի մի ցանկ, իրենց ստուգաբանություններով հանդերձ (որ ինքը գտել էր այս անգամ արդեն Վինդիշմանից անկախ), առանց սակայն այստեղ լեզվի բնույթի հարցին անմիջականորեն անդրադառնալու: Բոպպը իր համեմատական քերականության երրորդ հրատարակության (1857) նախաբանում հայերենը նշում է որպես իրանական լեզու և փորձում է, թեև առանց հաջողության, բացատրել թեքման տարրերը: Ֆր. Մյուլլերը, որը 1861 թ. սկսած մի շարք հոդվածներում (Վինենայի ակադեմիայի նիստերի արձանագրություններ) արդյունավետ կերպով զբաղվում է հայերենի ստուգաբանության և քերականության հարցերով, շատ ավելի է խորանում այս լեզվի էության մեջ, որը նա որոշակիորեն իրանական էր համարում: Հիմնականում նրան էր հետևում Պատկանովը «Հայոց լեզվի ծագման մասին» իր ամփոփիչ հոդվածում (ռուսերենից ֆրանսերեն թարգմանված Journal asiatique-ում, հ. XVI, շարք 6, 1870, էջ 126 և հաջ.): Թեև Լազարը իր «Հոդվածների ժողովածուում» (1866, էջ 201) պնդում է, որ հայերենում պետք է տարբերակել երեք բաղկացուցիչ մաս՝ նախնական հիմքը, դրա վրա հիմնվող հին

¹ U-ին շատ մոտ մի հնչյուն:

իրանական և ապա նոր իրանական շերտը, որ առաջացել է պարթևական թաղավորության հիմնադրումից հետո, բայց քանի որ նա չի նշում այդ երեք շերտերի տարբերակիչ առանձնահատկությունները, ապա նրա այս կարծիքն այլևս ուշադրության չի արժանացել: Համենայն դեպս հայերենի իրանական լեզու լինելու Մուլլերի տեսակետը չի հերքված և պետք է այսօր դիտվի որպես ամենահիմնավորված և տիրապետող կարծիք:

Որքանով է այն հաստատուն, կբնավի ստորև:

Մուլլերի հետազոտությունների գլխավոր թերությունն այն է, որ նա խնդիր չի դրել ապացուցելու, որ հայերեն բառերը, որոնք հնչյունապես համընկնում են պարսկերեն համապատասխան բառերին, պարսկերենից փոխառյալ չեն: Սակայն եթե մեզ ծանոթ հնագույն հայերենի փոխառություններուն արամեերենից և հունարենից, ապա մենք պետք է սպասենք, որ հայերը, որոնք երկար դարեր ապրել են ավելի հզոր և զարգացած պարսիկների ազդեցության տակ, պետք է որ նրանց լեզվից ոչ նվազ թվով բառեր փոխառեն²: Եթե այդ ընդունենք, կարելի է կասկածել, որ մի ամբողջ շարք բառեր փոխառյալ են, և բավական է, որ այս կասկածին մեկ անգամ տեղ տրվի, ապա շուտով կկորսվի նաև լեզվի իրանական բնույթի մասին եղած հավատը: Եվ այդ կասկածը շատ հեշտությամբ հիմնավորվում է: Հայերեն շատ բարդություններում հանդիպում է, օր. *das* «ծեղք» բառը, այն դեպքում, երբ այդ իմաստի համար սովորաբար գործածվում է *ḍēn*: Հետևաբար *dast* = պրս. *dasta* (զենդ. *zastā*. սնս. *hastā*-ի դիմաց), որ *z > d* հնչյունափոխությամբ առանձնահատուկ իրանական տեսք ունի, պետք է որ հայերենում փոխառություն լինի: Դրանով իսկ օտար են նաև դաստակ, դաստակերտ՝ հպրս. *das-taka*, *dastakarta*: Այնուհետև պարզվում է, որ հայերենում նախապես *t*-ով սկսվող բառերում կանոնավոր կերպով բառասկզբում *a* կամ *e* է ավելանում, այդպիսով՝ ռազմ «մարտ, կռիվ», ռահ «ճանապարհ», ռոնիկ «թռչակ»³, որոնց մենք հանդիպում ենք և պարսկերենում, փոխառություն են պարսկերենից, այնպես, ինչպես *t*-ով սկսվող բոլոր բառերը հայերենում օտար փոխառություններ են. հմմտ. ռաբբի «վարպետ, ուսուցիչ»: Այնուհետև, քանի որ բառավերջի *h*-ն պարսկերենում համապատասխանում է *ç*-ի կամ ատամնայինի, իսկ հայերենի բառավերջի *h*-ն՝ նախնական *s*-ին կամ *tr*-ին (և նախնական *ç* = հայ. *s*, նախալեզվի միջնայնավորային ատամնայինը՝ հայ. ատամնային կամ *j*), ապա պարսկերենի բառավերջի *h*-ն ստուգաբանորեն տարբերվում է հայերենի բառավերջի *h*-ից⁴: Հետևապես պարսկերենից են փոխառված հայ ալփա «հմուտ, ունակ» = նպրս. *agān*. *ākāça*-ից, գահ — նպրս. *gāh*, զենդ. *gāta*, զրահ = զենդ. *ziadha*, նպրս. *zirih*: Հետագայում, երբ մենք ստորև որպես հնչյունական օրինաչափություն կգտնենք, որ սնս. *j* = զենդ. *z* = հայ. *ḍ*, և ըստ դրա սնս. *jan*, «ծնվել» համապատասխանում է զենդ. *zan*, հայ. *ḍn*

² Ընդհանուր առմամբ այդ ընդունում է նաև Ֆր. Մուլլերը, քանի որ իր մի բարեկամական նամակում (1874 թ. հուլիսի 28), որտեղ նա հայերենը եռանդով իրանական լեզու է հայտարարում և նույնիսկ չի ուզում այն որպես անցման օղակ ճանաչել, գրում է. «Որ հայերենում նախապահյալներինց ներթափանցած շատ օտարաբանություններ են հանդիպում, ահա ներև ինչպես է. բայց ես վախենում եմ, որ կարող են որևէ բան, որն իսկապես հայերեն է, օտար բան համարել՝ միայն որպեսզի կարողանան ժխտել հայերենի իրանական բնույթը»: Սակայն բավարար չէ ընդհանրապես ընդունել այդ. եթե ուզում ենք դատել որևէ լեզվի բնույթի մասին, պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում վստահ լինենք, որ օգտագործվող նյութը օտար ունեցվածք չէ: Բացի այդ, ստորև առաջարկվող տեսության շահերից ելնելով՝ ինձ համար ցանկալի կլինեք, եթե Ֆր. Մուլլերին ինձ ապացուցեք, որ ես փոխառությունների հարցում շատ հեռուն եմ գնացել:

³ Պրս. *rōzī* որին հայերենում պետք է համապատասխանի ոչ թե ռոնիկ, այլ լուսիկ, քանի որ պրս. *roz* նշանակում է «օր» — հայ. լոյս:

⁴ Նույնն են միայն այն դեպքում, երբ երկուսն էլ առաջացել են *s*-ից՝ հայ. մահ — իկ, նպրս. *mah* «լուսին»՝ *masa*-ից:

(ծին, ծեն), ապա հայ. ազատ-ը (=պրս. azâd, զենդ. asâta` zan արմատից) պետք է դիտվի որպես օտարաբանություն: Ծիշտ նույնպես, երբ ստորև պարզվի, որ սնս. han=զենդ. jan հնչյունական օրենքի համաձայն հայերենում պետք է ներկայացված լինել և է՝ զան ձևով, ապա պետք է կասկածել, որ հայերեն զէն-ը «մորթել, զոհել» փոխառյալ է, քանի որ այն համապատասխանում է զենդ. jan, նպրս. zan ձևերին: նույն ձևով, երբ հնչյունապես սնս. aj համապատասխանում է զենդ. az հայ. ած, ապա զաւազան-ը=զենդ. gavaz բնիկ բառ լինել չի կարող (այն պետք է հնչեր որպես կովածան) և ոչ էլ խաղազան-ը, որի փոխարեն պետք էր սպասել իշածան: Վերջապես սնս. vaj—զենդ. yaz «մեծարել, պատվել, հարգել» հնչյունական օրենքի համաձայն պետք է հնչեր լած կամ ձած (սնս. j, զենդ. z, հայ. ծ համապատասխանություն մասին տե՛ս ստորև. բառակցքի j-ն հայերենում հետագայում սերտաձած նախդիրն է, որ կարելի է հեշտությամբ ապացուցել), սակայն բառը հնչում է լազ և աշդպիսով փոխառյալ է. նույնը վերաբերում է յաշտ «զոհ» բառին (զենդ. yêsh'ti) նույն ձևով պետք է փոխառյալ բառեր համարվեն դե=զենդ. daêva, որի փոխարեն ստորև ներկայացվելիք հնչյունական տեղաշարժի օրենքների համաձայն պետք էր սպասել տիւ, ինչպես և իմ համոզմամբ բագ-ը «աստված» —զենդ. bagha և դէն-ը⁵ «կրոն» —զենդ. daêna բառեր են, որոնք Հայաստան են թափանցել զրադաշտական կրոնի հետ միասին: նույն ձևով ես առանց որևէ ապացույց բերել կարողանալու Պարսկաստանից Հայաստան թափանցած կհամարեի այնպիսի բառեր, ինչպես թոշակ=պրս. toshah „viaticum“, ամբոխ=պրս. anboh, զնդան=պրս. zindan, մինչդեռ դիպակ=պրս. dibâh, արաբ. dîbâj, փրագ=պրս. ciragh, արաբ. siraj, թուրակ=պրս. tûtak, tuti, կեբալաս=պրս. klrpas, արաբ. klrbas, սնս. karpasa, հուն. καρπας և ալլ բառերի մասին կասկած չի կարող լինել, որ դրանք օտար ունեցվածք են: Եթե ինձ համար այդքան հեշտ եղավ Մյուլլերի կողմից քննարկված բառերից մի որոշ թիվ⁶ որպես փոխառություն անշատել, որքան ավելի կմեծանար այդ թիվը, երբ դր կազարդի հոտառությունն ունեցող մեկը ձեռնարկեր հայերենի ամբողջ բառապաշարից առանձնացնելու օտար տարրերը: Թերևս հնարավոր կլիներ դրանց մեջ երկու՝ ավելի հին և ավելի նոր շերտեր տարբերակել, և աշդպիսով գտնվեին այն երկու շերտերը, որոնք ըստ դր կազարդի հիմնված պետք է լինեն հայկական հիմնաշերտի վրա:

Եթե մենք այսպիսով թերահավատ դարձանք բառապաշարի վերաբերյալ, ապա քերականությանը ավելի վստահորեն կարող ենք դիմել, քանի որ սա բոլոր կենդանի լեզուների համար այն պալլագիտն է, որին օտար ազդեցություն չի կարող դիպել: Որքան խառնակ է աֆղաներենի և նոր պարսկերենի կամ անգլերենի բառապաշարը և որքան պարզ է ցույց տալիս քերականությունը, որ մեր առաջ մի դեպքում իրանական, մյուս դեպքում՝ գերմանական լեզու է: Մենք պետք է հույս ունենայինք հայերենի խնդրում քերականությունից լուսաբանում ստանալ, մանավանդ որ այն համեմատաբար հարուստ թեքում ունի, քանի որ հայերենը անվան մեջ վերջավորություններով տարբերվող չորս և դերանվան մեջ հինգ հոլով ունի և բայի մեջ, չհաշված աներևույթն ու դեր-

⁵ Որպես պարսկերեն է նշվում նաև Զախախյանի հայ-իտալերեն բառարանում:

⁶ Դրանց են միանում նաև օտար հատուկ անունները, որոնք խիստ կերպով սահմանափակում են բնիկ հայկական անուններից. վերջիններս միանգամայն յուրահատուկ հնչում ունեն և ստուգաբանորեն մոտ չեն, իսկ առաջինները հին ծանոթներ են պարսկերենից, ինչպես՝ Արտաւան=զենդ. ashavan և դրանից հին պրս. artavan, Արտաւազդ=զենդ. ashavazdah, ռուստի հին պրս. artavazdah (առաջինը—հուն. Ἀρταβανος, Artabanus, Երկրորդը՝—Ἀρταβαζης կամ Ἀρταβαζδης, Artavazdes և այլն: Այդ պատճառով էլ սխալ է միայն հատուկ անուններից ելնելով փորձել ապացուցելու պարսիկների հարեան որևէ ժողովրդի իրանական ծագումը:

բաշխերը, թեքման միջոցով տարբերակում է ներգործական և կրավորական խոնարհումներ, սահմանական, ստորադասական և հրամայական եղանակներ, ներկա, անկատար, պարզ և բաղադրյալ կատարյալներ և դրանց համապատասխան կրկնակի ապառնիներ: Փանի որ այստեղ ես համառոտակի պետք է անդրադառնամ քերականությանը, թող թույլ տրվի անունների և բայերի թեքման մի հարադույց ներկայացնել:

ա) Անուն

Հիմքեր՝ մարդո (թրոսո-), անուա (անան)

Եզակի

Հոգնակի

Ուղղ.	մարդ	անուն	մարդք
Հայց.	դմարդ	դանուն	դմարդս
Սեռ.-տր.	մարդոյ	անուն	մարդոց
Բաց.	ի մարդոյ	յանունսէ	ի մարդոց
Տր. (դերանվ. հոլ.)	մարդում	—	—
Գործ.	մարդով	անումամբ	մարդովք

բ) բայ՝ գեր-ել

	Ներգործական	կրավորական
1-ին դ. եզ. սահմ. ներկա	գերեմ	գերիմ
ստորադ. ներկա	գերիցեմ	գերիցիմ
բաղադ. հիմքով կատարյալ	գերեցի	գերեցայ
պարզ հիմքով կատարյալ գտ- անել բայից	գտի	գտայ
ապառնիներ	դերեցից	դերեցայց
	գտից	գտայց

Որպես առաջնալին բայական վերջավորություններ ծառայում են՝ մ, ս, յ, մֆ, յֆ, ն, իսկ որպես երկրորդալին՝ ի, իր, բ, աֆ, ալֆ, ին:

Բայց եթե հայերենը քննում ենք նրա կառուցվածքի ամբողջության մեջ, ապա այն թողնում է մի լեզվի տպավորություն, որ մեծ փոփոխություններ է կրել⁸, և որոնց հետևանքով հիմքականական և բառակազմական հին նյութից բազմաթիվ տարրեր է կորցրել և կորցրածը փոխարինել թեքման նոր տարրերով: Այստեղից բխում է, որ ստորադասական ներկայի հիմքից և էական բայի ստորադասականից բաղադրված կազմություն է՝ եմ = sum, իցեմ = sin, դրանից էլ գերեմ-գերիցեմ, աղամ-աղայցեմ, և որ ճիշտ նույնպես ապառնի կազմված է կատարյալի հիմքից և նույն ստորադասականից՝ կցվող բաղադրիչների աննշան ձևափոխությամբ. գերեց+իցեմ—գերեցից փխ. գերեցիցեմ, 2-րդ դ. գերեց+իցեմ=գերեցես փխ գերեցիցես և այլն, այն դեպքում, երբ անկատարը նույնպես կարող էր ներկայի հիմքից և էական բայի անցյալ անկատարից բաղադրված նորակազմություն լինել՝ եմ—sum, էի—eram, գերեմ—գերի, սական Ֆր. Մյուլլերը, նկատի ունենալով ա խոնարհման բայերը, որոնք անկատարը կազմում են ոչ թե էի, այլ ալի ձևությամբ՝ աղամ—աղայի, գտնում է, որ անկատարը կազմվում է ya ածանցով. բերեի—բերեյ+ի⁹:

⁸ Թիֆլիսի ժամանակակից բարբառում ներգոյականը ընդհանրապես կազմվում է ում-ով, որը միայն դերանվանական ծագում կարող է ունենալ, իսկ սեռականն ու տրականը նույնացել են: Դրանով անշուշտ ներ հայերենի այս տարբերակը նորակազմ մեկ հոլովով ավելի հարուստ է, քան դասական հայերենը:

⁹ Այլ ցույց է տալիս մի օրինակ. երկրորդ դեմքի հոգն. թվի անձն. դերանունը՝ դուֆ, կազմված է եզակի դու-ից՝ գոյականի հոգնակիի ֆ (հ.-ն. as-ից) ցուցիչով: Անշուշտ ոչ մի հնդեվրոպական լեզու այսքան հեռու չի գնացել:

⁹ Զբաղադրված կմնային նաև էի, էի, էր և այլն, մինչդեռ մենք կարող ենք ենթադրել, որ այս անկատարը անցել է ya-ից, որ մասամբ վերաբերում է նաև ներկային, որտեղ է-ն բաղադրվում է ոչ թե asti-ից, այլ ավելի շուտ համաբանությամբ՝ բերե=bhereti-ից:

Բայց և այնպես, լեզվական նորագոյացումների զլխավոր գործոնը՝ համարանությունը, անշուշտ ուժեղ է գործել, ինչպես նաև նշանակալից չափով համաբանության ազդեցությունը է իրականացել հին հայերենի թեքման համակարգի վերափոխումը նոր հայերենի համակարգին: Մի օրինակ. կրավորականի ցուցիչն է հ-ն, որ ավելանալով ու-ով ներկայի հիմքերին, հանգես է գալիս որպես ուի (գեճուկ կրավ. գեճուկ, լնուկ կրավ. լնուկ) և այս ուի-ն, որը նախապես շատ սահմանափակ թվով բայերի ներկայի կրավորականի ցուցիչն էր, ժամանակակից հայերենում դարձել է կրավորականի ընդհանուր ցուցիչ: հիմտ. նհայ. գործվիլ—հհայ. գործիլ, ներգ. գործել: Այս իրավիճակում պարզ է դառնում, թե ինչու հայերենի թեքման տարրերը դեռևս մեզ համար այդքան մոթ են: Ես չգիտեմ, ինչպես պետք է բացատրել բաղադրյալ հիմքով կատարյալ կազմող ց-ն¹⁰, ինչպես նաև իցեմ-ի մեջ և այլուր հանդիպող ց-ն. եթե այն դիտենք որպես հ.-ե. աորիստի s-ն և sy-ն՝ syam-ից՝ as-ի բղձական ձևից, ապա հայերենը բնավ չէր կարող իրանական լեզու լինել, քանի որ սրանց մեջ s-ն ներկայացված պետք է լինի որպես h, իսկ sy-ն՝ hy: Նույնքան մոթ են երկրորդային բայական վերջավորությունները. առաջնայիններն, ընդհակառակն, պարզ են, որտեղ՝ մ=mi, ն=ni, յ=ti, մֆ=masi, որի համաձայն լֆ-ն (=tkh) կարող է ծագած լինել Շլախերի կողմից ընդունված tasi նախաձևից, որի դիմաց սանսկրիտը և ղենդը հանդես են բերում tha: Սակայն յֆ-ն հավանաբար առաջին դեմքի մֆ-ի համաբանությամբ կազմված ձև է, և ֆ-ն պետք է դիտել որպես հետագայում առաջացած հավելում, այնպես որ յ-ն նույնպես ծագում է tha-ից կամ նման մի ձևից: Հայերենի իրանական բնույթին հակասում է եզ. 2-րդ դեմքի ս ածանցը, քանի որ իրանականը դրա փոխարեն հանդես է բերում h, թեև օսերենը, հաստատապես իրանական մի լեզու, նույն ձևի մեջ ի հայտ է բերում s, որի բացատրության հարցը առանձին դեպքերում դեռևս բաց է:

Հոգնակիի հոլովակազմիչներից ց-ն դարձյալ պարզ չէ, ֆ-ն հանգեցվում է as-ին (կամ ինչպես Զ. Մյուլլերն է գտնում, asas-ին, իրան. ātāh), ս-ն՝ ans-ին: Գործիականում ունենք եզակի գործիականի ցուցիչը, որին ավելանում է հոգնակիի ֆ ցուցիչը: Եզակիի հոլովակազմիչներից տրական-ներգոյականի մ-ն ծագում է դերանվանական -hmay, -hmi ձևերից. բացառականի է-ն դժվարությամբ է հարուցում. Ֆր. Մյուլլերն այն փորձում է հանգեցնել adha-ին, որ մի քանի անգամ որպես բացառականի վերջավորություն հանդիպում է Ավեստայում: Ես ավելի շուտ կուզենայի (եթե իրոք այն չի համապատասխանում at-ին, մտածել tas=զենդ. to մակբայակերտ ածանցի մասին: Մնում է քննել գործիականի ք հոլովակազմիչը: Այն դեպքում, երբ այս ցուցիչը նախապես նույնացվում էր հնդեվրոպական գործիականի ցուցիչներից մեկի՝ bhi-ի հետ, ես և Ֆր. Մյուլլերը վերջերս փորձեցինք դրա մեջ նորակազմություն տեսնել, անշուշտ, ոչ այլ հիմունքով, քան այն, որ այս ածանցը հակասում էր հայերենի՝ մեր կողմից հաստատվող իրանական բնույթին, քանի որ ինչպես արիականում ընդհանրապես, այնպես էլ իրանականում չկա գործիականի bhi ցուցիչ: Մեր եզրակացությունը հետևաբար այս էր. քանի որ հայերենը իրանական լեզու է, ապա այն չի կարող գործիականի bhi ցուցիչ ունենալ: Իսկ ինչ, եթե ավելի շուտ եզրակացվեր հակառակը՝ քանի որ հայերենը ունի այս ածանցը, ուրեմն նա իրանական լեզու չէ: Արդ, ք-ն հայերենի հընչյունական օրենքների համաձայն անշուշտ մատնանշում է bhi-ին, և նախնական anmanbhi, martabhi պետք է հայերենում դառնային անմաք, մաքղոր, ավելի ուշ՝ անուամբ, մաքղով, ինչպես այժմ իրականում հնչում են անուն, մաք բառերի գործիականները: Եվ քանի որ նաև իր գործառութայնությամբ ք-ով վերջացող հոլովը զուտ գործիական է, ապա հայ. ք=հ.-ե. bhi համապատասխանության դեմ ոչնչով չի կարելի առարկել: Այս bhi ածանցը փորձել ենք գտնել հունարենում, գերմաներենում և սլավոնալիտական լեզուներում: Բայց

¹⁰ Ց-ն շնչեղացած ծ-ն է, ինչպես և շ-ն՝ շնչեղացած ց-ն:

հուն. *βι-*ին կարող էր ծագել նաև *bhi-*ի հետ բաղադրված ալլ ձևույթներից (*bhiam, bhiams, bhîams, bhis*), գերմաներենում *mi=bhi-*ով գործիական իրականում չկա.¹¹ այնպես որ այն մնում է միայն սլավոնալիտականի համար, որտեղ *bhi-*ն պահպանված է որպես եկալ. *mi, լիտվ. mi*: Հետևապես *bhi-*ն որպես եղակի գործիականի ձևույթ հարմարվում է միայն հայերենին և սլավոնալիտական լեզուներին:

Ն գ ր ա կ ա ց ու ր յ ու ն. Հայերենի թեման մեջ առանձնահատուկ իրանական բնույթի երևույթներ հնարավոր չէ ցույց տալ, բնդհականակն, մի կարևոր կետում այն բաժանվում է արիականից և համաձայնում է սլավոնալիտական լեզուների հետ:

Քանի որ թերումը հայերենի բնույթի մասին մեզ բավարար պարզաբանում չի տալիս, անդրադառնանք հնչյունաբանությունը:

Մ Ա Ս Ն I

Պարզելու համար, հնչյունական տեսակետից հայերենը իրանական լեզու է, թե ոչ, նախ պետք է պատասխանել հետևյալ հարցին՝ որոնք են իրանականի հնչյունական համակարգի բնորոշ գծերը հնդեվրոպական մյուս լեզուների համեմատությամբ:

Դրանք հետևյալն են.

Ա. 1) Ատամնային *s-*ն ընդհանրապես, երբ նրան անմիջաբար որևէ բաղաձայն չի նախորդում կամ հաջորդում, դառնում է *h*, և

2) համապատասխանաբար՝ *sv-*ն՝ *hv*,

3) բայց այն դեպքերում, երբ նրան նախորդում է *i, u* կամ *ai, au*, դառնում է *sh*: Վերջին կետում իրանականը համապատասխանում է սանսկրիտին (չհաշված բառավերջը, որ սանսկրիտը պահպանում է *s-*ն), մինչդեռ սլավոնականում այս *sh-*ի փոխարեն ձայնավորների միջև առաջանում է հագագային *ch* (*sluchū=sraosha*): Հունարենն, ընդհակառակն, *s>h* անցումով համապատասխանում է իրանականին, միայն թե հունարենում այդ փոխարկումը իրանականի նման հետևողականորեն չի իրականացել: Ի դեպ, կելտերենում նույնպես *sv-*ն դարձել է *hv, chv*. հմմտ. *կոռն. huir, արեմ. choar «քույր»=նպրս. khvahar, կիմր. chwech(=sves) «վեց»*:

4) Իրանականը խուսափում է շնչեղներից և հակված է շփականների կազմավորման, որոնցից հատկապես սիրում է *kh, gh, f* և *w*: Այնուհանդերձ, Գաթաներում և հին պարսկերեն բևեռագրերում վկայված հնագույն իրանական բարբառները ձայնեղ շփականներ (ինչպես *gh, dh, w*, որոնք կան սովորական զենդերենում) դեռևս չունեն¹², իսկ օտերենում *k, t* խուլերը դարձել են շնչեղ: Բելուջերենը նույնպես (տե՛ս հոդվածի վերջում) ունի շնչեղներ, բայց դրանք հավանաբար առաջացել են հնդկերենի ազդեցությամբ:

5) Բաղաձայնների կապակցության մեջ շփականները առաջանում են պայթականներից՝ որևէ հաջորդող *t, sh, r, w-*ի ազդեցությամբ, այնպես որ սկզբնական *kt, pt, tt-*ն դարձել են *kht, ft, st, ksh-*ն՝ *khsh, kra, pra, tra-*ն՝ *khra, fra, thra*:

6) Ուշագրավ է հին իրաներենում *l-*ի բացակայությունը¹³, *cv-*ի անցումը *sp-*ի և, հակառակ հնդկերենի՝ նախդրի *pati* (—սնս. *prati*). մակբայի

¹¹ Հվդ. *u-*ով գործիականի համար հմմտ. *Braune. Ueber die Quantität der ahd. Endsilben*, էջ 40:

¹² Ավելի ճշգրիտ տե՛ս *Spiegel, Grammatik*, էջ 345:

¹³ Որ հին իրաներենը *l* չուներ, հետևում է այն բանից, որ ժամանակակից իրանական լեզուներում *l-*ի գործածության մեջ ներդաշնակություն չկա: Կարելի է, օրինակ, համեմատել 3 «Հանդես», № 4

Բ. Իրանականում բաժակալուծ, են շնչեղ-ձայնեղները, որոնք շնչեղության կորստով նույնացել են պարզ ձայնեղների հետ և հետագայում նրանց հետ միասին շատ ղեկաբերում շփակմանների են վերածվել: Սլավոնալիտականում նույնպես պարզ և շնչեղ, ձայնեղները համընկել են:

Այսպիսով այս բնորոշ գծերից՝ լուրաքանչյուրը առանձին հանդիպում են նաև հ. - ե. մյուս լեզուներում, և միայն այս բոլորի ղուգագրիպումը (միասին հանգես. գալը) կարող է կերտել լեզվի իրանական բնույթը: Արդ, հանդիպում են, արդյոք, այդ բոլոր առանձնահատկությունները միասին հալերենում:

հետևյալ դեպքերը՝ ou. stal «ստալ», «ստալացող կենդանի (օձ)», nal «մարդ, այլ»
malin «մալին», «սարմալ», siarah, k'rim, nar, murdan-ի հետ և ընդհանրապես, նպր. gu-
lu (gula «կակոդ»), on. gur «գուր», siarah ին. «կակոդը»-ի դիմաց. նպր. talkh «դառն»,
աֆղ. tric «trayān», նպր. k'adghē «քաղաք», guragh «աղոպ» (աֆղ. karghēh «աղ-
ոպ»)։ Այդ պատճառով հակառակ Օպերտի առաջնությունների (Revue de linguistique,
IV, 1959) 1-ի պատկերացմանը՝ հրաշխանություն պետք է միանք։

15 Grundlage des arm., § 20.

հմմտ. պատմել, սակայն պատ-ով բառերից մի քանիսը փոխառյալ են (ինչպես պատգամ, պատգամավոր=նպրս. palghambar «մարգարե»): uz գտնում ենք զգոյշ-ի մեջ=uzgaosha, և եթե այն որոշ հափով մթագնած իմաստով միայն զ բայածանցի մեջ գտնվեր, ապա դժվար թե պարսկական լեզուների հետ հայերենի սերտ ազգակցության համար մեծ նշանակություն ունենար: Բառապաշարի համապատասխանություններից այստեղ հիշատակենք միայն մի դեպք՝ նախ, որին հանգում է նպրս. nuchust «սկզբից, նախառաջ»:

Բ. Ինչ վերաբերում է շնչեղ ձայնեղներին, ապա մենք կարող էինք ընդունել, որ արդեն իրանական հիմք լեզուն կորցրել էր շնչեղությունը, և շրնչեղ ձայնեղները նույնացրել պարզ ձայնեղների հետ: Նախքան այդ տեղի կունենար, պետք է որ (եթե մենք ծննդաբանական ծառ կազմենք) հայերենը իրանականից բաժանված լիներ, քանի որ այստեղ շնչեղ և պարզ ձայնեղները չեն համընկել, այլ, ընդհակառակն, միշտ իրարից անջատ են մնացել: Որովհետև այն ժամանակ, երբ շնչեղ ձայնեղները տեղաշարժվել են դեպի ձայնեղները, վերջիններս փոխարկվել են խուլերի, իսկ խուլերը մնացել են նույնությամբ կամ փոխվել են շնչեղ խուլերի կամ շփականների: Այսպիսով նախնական

gh	g	k
dh	d	t
bh		p

շարքերը հայերենում ստացել են հետևյալ տեսքը՝

q	կ	կ, ք
g	տ	տ, թ, չ
p	պ	պ, փ, հ

Ապացուցները ստորև.

ա) Ատամնայինների շարք

Հայ. դ=նխ. dh, հայ. դ-նե-լ=նխ. dha «դնել, անել», դիքք՝ ե-դի կատարյալից, ձ-ձե (հմմտ. տուր, կատարյալը՝ ե-տու), դուստր=dhughtar, դուռն=dhvara, dhurā, դիել, դայեակ, դայլ, դալ «թարմ կաթ» (ծնելուց հետո)=dhā «կրծքով կերակրել», դեմք, դետ, դիտել՝ արմատն է dhi, դեզ, դիզել, դիզանել՝ արմատն է dhigh, դծել և դրծել=dhrugh, հառ-դեռ արմատն է dhargh «ամրացնել»: Ըստ այդմ դաւ, եթե այն պարսկերեն փոխառություն չէ, սնս. dabh-ի հետ միասին պետք է հանգի նխ. dhabh-ին: Կրկնակի տեղաշարժված է թվում տուռ=dhâman¹⁶:

Հայ. տ=նխ. d. առամն (ա-առ-մն)=dant, տաւ=dâ, տագր=davar, տասն=dak'an, տես-անել=dark¹, տիւ=diva, առ-ել-լատ. odi, գետ, վտակ արմ. vad, եկսլ. voda, գիտել=vid, գտ-անել=vind, ց-սա-իլ=sad, ոտն=pada, ուտ-ել=ad, սիրտ=k¹erd, քիքան=svidra, ձեռ «պոչ»=զենդ. zadhanh, արմատն է ghad, չեծ, հայ. տրտում=փազենդ., պրս. dard «ցավ, տառապանք». dush մասնիկը հանդես է գալիս որպես տծ, նաև թշ (թշնամի=պրս. dushman, հականիշ՝ հոմանի), բայց սովորաբար՝ որպես դծ: Վերը շարադրվածի համաձայն զենդ. daëva-ին պետք է հայերենում համապատասխաներ տես, բայց հայերեն բառը հնչում է դէւ և ըստ այդմ փոխառյալ է:

¹⁶ Կամ թերևս տուռ-ը (=dama-n, հմմտ. դուռն=dhvara-n) հանգում է սնս. dama, հուռն. δομο-ին:

նիս. Է-ն պահպանվում է հարևան բաղաձայնների «պաշտպանություն» տակ՝ աստղ, դուստր. կամ դառնում է դ՝ դու (tuam-ից), լեարդ=yakart, մարդ=թրուճ, աղ=vâta, կամ փոխվում է շնչեղ խուլի՝ թարմ=սնս. taruna, թարշամ (ան-թարշամ-ի, թարշամեցուցանել-ի մեջ), արմատը tars, լատ. toreo, տրեոճ, եսթ=saptan, ութ=ashtan, թանձր, արմատը tañc, արծաթ=սնս. rajata, կամ ձայնավորների միջև փոխվում է յ-ի. հայր, մայր, բերե=bere-ti և ալն:

բ) Շրթնայինների շարք

Հայ. բ=նիս. bh բանդ, բանտ, արմատը, bhandh բազուկ=bhaghū, բազում=bhaghū, բաճանել, արմատը՝ bhag, բարձ=սնս. barhis զենդ. berezish¹, արմատը՝ bhargh, եղբայր=bhrâtar, եղբիւր=թրեթր, բուժել=զենդ. buj «փրկել», փաղենդ. bôkhtan «ազատել», նիս. bhug, բոյժ «կերակուր»=սնս. bhuj¹⁷, որբ=թրֆաճ, orbis, բերեմ=թրթ, բան=թոնդ, սուրբ=սնս. çubhra: Ոչ օրինաչափ տեղաշարժ է ցուցաբերում ամպ=սնս. ambhas «ջուր»: Հմմտ. սակայն ամբ տարբերակը, ինչպես նաև հուն. ὀμβρος, լատ. imber:

Բ խուլ պալթականը պահպանվել է՝ կապել=capere, պարտք (հիմքը պարտու-), զենդ. par (pesha, peretha ձևերում) «մեղք ունենալ, մեղանչել», պշնուլ=սնս. paç, պամբել=pati+ma, շնչեղացել է¹⁸ փռչի=զենդ. pānu, փետուր=feder, փուտ=սնս. puti «փտած, ներած», պահլ. putak բառերում, և բառասկզբում փոխվել է հ-ի՝ հայր=patar, հիգ=pankan, հարցանել=նպրս. purs-idan, հերու=ou. fare «անցյալ տարի» farwäre (=fariäre) «նախանցյալ տարի», պրս. pâr «անցած տարի»:

գ) Ետնալեզվայինների շարք

Հայ. գ=նիս. g. գարի=hordeum, նիս. ghardha, պահլ. jurdāk «հացահատիկ, գարի», բելուջ. zurth-anı «հացահատիկի մի տեսակ», մեղ-սնս. megha, վազր=սնս. vyaghra:

Հայ. կ=նիս. g. կով=gāu, կլանել, կերի՝ արմատը gar, կեալ՝ արմատը giv, կիմ=gena, կռուցիլ=թրթ, եկի՝ արմատը ga, որից անշուշտ ներկալի գա-մ ձևն է ծագում: Նաև գրաւել-ը չի համապատասխանում սնս. grabh, զենդ. garb-ին, սակայն այս նույն ոչ օրինաչափ անցումը առկա է նաև գոթ. greipan ձևում: Հմմտ. նաև էջ 38 և հաջ.՝ «պալթականը պահպանվել է ակն „oculus“, կամ-իլ, սնս. kama, կերպ=corpus, կապել=capere, բառավերջում դարձել է գ. երգ=սնս. arca, սակավ զեպքերում շնչեղացել է՝ քարշել=

¹⁷ bh-ն ձայնավորից հետո միշտ դառնում է վ(i)՝ դալ, սնս. dabh, գրաիլ=սնս. grabh, -աուր ածանցը=a-bharg, մարդով=martabhi, ք-ն և ր-ն նույնպես փոխվում են վ-ի. եսթ=saptan, աեուս, աեուան--anman:

¹⁸ Հանդիպում է նաև փոխառություններում՝ փարթամ, պահլ. fratum փուրսիշ «դատական քննություն»=պրս. pursish, փիղ=պրս. fil: Սակայն ք-ի փոխարեն ֆ-ով սկսվող փոխառություններում հայերենը, քանի որ ֆ չունի, դնում էր միշտ հնչյունապես մոտիկ հ. հրաախի=արաբ. farsax, պրս. farsang, հրաման=պրս. farman, հրեշտակ=պրս. firishtah: Քրդ-դերը նույնպես ֆ-ն փոխել են հ-ի, բայց այն պահպանվել է փոխառություններում, օր. firman (Ֆուստի. Քրդերենի շփականները, էջ 15): Օսերը բնագականակն, բառասկզբի ք-ն ընդհանրապես փոխել են ֆ-ի. farsun «հարցնել», fonzd «հինգ», fathan «լայն», այնպես որ ք-ն միայն օտար բառերի սկզբում է հանդիպում, մինչդեռ աֆղաներենը ֆ-ի փոխարեն դնում է յ, և ֆ-ն գործածվում է միայն արաբական և պարսկական փոխառություններում:

զենդ. karesh, բեհ=զենդ. kaēna, նպրս. kīn քանգել (քանգ-ել գոյականի⁹)
զենդ. kan, սնս. khan-ից:

Մի այլ շարքի տեղաշարժը (gh¹—gh¹) (տե՛ս էջ 40 և հաջ.:

Այս է հայերենի առաջին հնչյունական տեղաշարժը: Ժամանակակից արևմտահայերենում տեղի է ունեցել նաև երկրորդը՝ ձայնեղների և խուլերի հնչյունական հարաբերությունը, ինչպես այն ձևավորվել էր առաջին տեղաշարժից հետո, շրջվել է, այնպես որ նախկին շնչեղ ձայնեղները այժմ որպես խուլեր են հանդես գալիս, իսկ նախնական պարզ ձայնեղները, ինչպես նաև նախնական պարզ խուլերի մի մասը՝ որպես պարզ ձայնեղներ, մինչդեռ շփականներն ու հագագայինները մնացել են նույնը: Հետևաբար, հայերենում պարզ և շնչեղ ձայնեղները չեն համընկել, ինչպես այդ տեղի է ունեցել իրանականում:

Գ. Մենում է քննել նաև մի վերջին կետ՝ նախնական ետնալեզվայիններից սուլականների առաջացումը, մի կետ, որտեղ իրանական և սլավոնալիտական լեզուները շատ համապատասխանություններ ունեն, այնպեզ որ Յոհ. Շմիդտը դրա վրա հենվելով առարկում էր հնագույն ժամանակներում իրանականի և սլավոնականի, արիականի և եվրոպականի անջատման դեմ և խախտում էր այդ ժամանակից հաստատված հ.-ե. լեզուների ծննդաբանական ծառը: Որովհետև ոչ միայն նախնական կ-ն՝ k և k¹=չ s-ի ճեղքվելու, այլև, Ասկոլիի ապացուցման համաձայն ց-ն՝ ց և ց¹=իրան. սլ.-լիտ. z, z և gh-ն gh և gh¹-ի իրան., սլ. ք, ք ճեղքվելու մեջ սլավոնալիտականն ու արիականը հիանալի կերպով համապատասխանում են¹⁹: Այս տեղեկությունը, սակայն, բավարար չէ մեր մերձավոր նպատակին հասնելու համար. և որպեսզի մենք կարողանանք հայերենում ետնալեզվայինների ճեղքումը արիական և սլավոնալիտական լեզուներում նույն կերպով հետ համեմատել, մենք պետք է այդ շարքը լիակատար կերպով ներկայացնենք, ինչպես ես այդ անում եմ ստորև.

1. ց-ի ճեղքումը ց-ի և ց¹-ի.

ա) ց-ն սանսկրիտում հանդես է գալիս որպես ց, զենդ. ց, հայ. կ, սլ.-լիտ. ց:

Համար. 1) սնս. ga, gam «գանալ», զենդ. ga (gama, gaya) ձևերում և ga՝ gata, apa-gaiti, gam՝ ja-ghm-at, albi-gamen ձևերում, հայ. եկի, եկ ետե՛րական» (βαινω, venio). 2) սնս. gar «կանել», զենդ. aspo-gara «ձիակուլ», garañh «կոկորդ, կլան», օս. gur=ghur «կոկորդ», հայ. կեքի, -կեք՝ բարդությունների մեջ=հուն. βόρος-, լիտվ. geriù, սլ. žira. 3) սնս. gaya «ուշք, կլանք», զենդ. gaya «կլանք», հայ. կեանք, կեալ, լիտվ. gyvas, սլ. živú (βίος, vivus). 4) սնս. hau, «կով»=զենդ. gau, նպրս. gāv, հայ. կով, (bos) եկալ. gov-ēdo. 5) սնս. gūtha «կղկղանք», զենդ. gutha «կեղտ» նպրս. guh, քրդ. gu, հայ. կու, եկալ. govino. 6) սնս. gna «աստվածուհի», զենդ. ghenā, genā(=*gna) «կին», հայ. կին, պրուս. genna. 7) սնս. ranga «գույն», նպրս. rang, հայ. երանգ. 8) սնս. grivā «ծոծրակ»=զենդ. griva,

¹⁹ Շարքերը հետևյալն են. նի. k=սնս. k, իրան. k, հայ. կ(p), սլ.-լիտ. k և k¹=սնս. c, իրան. s, սլ. s, լիտ. sz: Հայերենը համապատասխանում է իրանականին և սլավոնականին. համար. տասն: Բայց երբեմն հանդիպում է շ՝ ս-ի փոխարեն. ինչպես շունը=սնս. çvan, պշ-նու-լ, սնս. pac, ինչպես և նոր պարսկերենում՝ shâkh «ճյուղ», փխ. sakh=սնս. çakka, shustan «մաքրել»=çudh. դա նշան է, որ իրանականի սուր s-ն շատ մոտ է sh-ին=սնս. ç: Եվ երբ այդ պատճառով սլավ. s=k¹-ի զիմաց լատիններենում ունենք sz և իրանական s=k¹-ի զիմաց՝ հնդկերենում ç (այժմ հնչում է sh), ապա այս աարբերությունը մենք Յոհանես Շմիդտի հետ միասին, հակառակ Ֆիկի, էական չենք համարի: Արիասլավոնական մեկ çvan, çuni ձևից միայն հետագայում են առաջացել սնս. çvan, սեռ. çunas և çuni, զենդ. sunō, suni, հայ. շուն, սեռ. շան, հպրուս. suniss, լիտվ. szū, սեռ. szuns: Ինչ ասվում է սլավ. s=լիտվ. sz համապատասխանություն մասին, պետք է ճիշտ լինի նաև սլավ. z=լիտվ. z, նի. ց¹ և gh¹ համապատասխանություն համար:

եկսլ. griva «բաշ» 9) սնս. angara «ածուխ», լիտ. anglis, եկսլ. agli, 10) սնս. yuga «լուծ, գույգ», ղենդ. yaogēt (yuj-ի անկատարը), yukhta, հայ. զոյգ-ք, եկսլ. igo, լիտ. jūnga-s, jugum, Շոյն. 11) սնս. ցու «սար», ղենդ. galri, լիտ. gire (անտառ), եկսլ. gora. 12) սնս. gar=զենդ. gar «մեծարանքով անվանել», օս. ghar «կանչ, ձայն, հնչյուն», եկսլ. glagolati, լիտ. girtiū 13) ղենդ. mazga=եկսլ. mozgu „medula“. 14) հայ. կոուկ=հուն. γερνός, լիտ. gėrvė:

Վերոհիշյալ ց-ն մի քանի դեպքերում տեսնում ենք փոխված յ-ի, այսպես, սնս. gam, ղենդ. ga-ի կողքին նույն ղենդերենում հանդես է գալիս jam, jim, jas արմատը և ներկայի հիմքը, որոնց նախնական ց-ն պահպանված է մնում այնտեղ, ուր հենված է լինում որևէ բաղաձայնի՝ jaghmat. ղենդ. ghenā-ի «խին» կողքին առկա է ղենդ. jeni²⁰, gi-ի «կանք» կողքին (gaya jighaesha «կանքի ապրիր» ձևում) առկա է ji-ն՝ jiti ձևում, jiv-ը jivya ձևում, սնս. ju, ղենդ. ju=jiv, սնս. yuga-ի կողքին՝ yuj=զենդ. yuj: Այսպիսով կարող ենք սահմանել նաև նիս. g=սնս. j=զենդ. j=հայ. կ, սլ.-լիտ. g համապատասխանությունը. հմմտ. 15) սնս. rajas «մթնոլորտ, ամպ, մութ» =հայ. երեկ, հուն. ἑρεβος, գոթ. rigas. 16) սնս. bhañj «կոտել» bhanakti, bhañga «կոտրեց» =հայ. բեկ, լիտ. banga: Ծիշտ նույնպես յ-ն միայն հետադարձում է առաջացել ց-ից՝ սնս. jia=զենդ. jia «լար, ջիղ» =լիտվ. gijē, հուն. βίος, սնս. jināti—զենդ. j.nāti «անցնել, թառամել», լատ. victus²¹, եվ. այս յ-ն իրանականում կարող է չի դառնալ, հմմտ. սնս. tij «սրվել», ղենդ. taēgha «սրություն», tighra «սուր», նպրս. tēgh «սուր գործիք», հայ. տեգ. ղենդ. taēzha «կացի», tizhi «սուր», նպրս. tiz «սուր»: Այժմ հարց է ծագում, արդյո՞ք հայերենը նույնպես ետնալեզվայինի քմայնացման հակում է ցուցաբերում այն դեպքում, ուր սանսկրիտում և իրանականում հավասարապես ց-ից յ է առաջացել. իրանականում կա երեք ղենդ. որտեղ արիական յ քմայնի ղենդ. հայերենում ժ է համապատասխանում, այն է՝ սնս. ojas =զենդ. aojañh (սնս. ugra, ղենդ. ughra-ի կողքին), հայ. ոյժ. սնս. bhaj, ղենդ. bazh (սնս. bhāga «բաժին»), ղենդ. bagha «բաժին». հայ. բաժ, բաժանել. և ղենդ. buj, պահլ. bōkhtan «փրկել, ազատել», հայ. բուժ-ել:

Այսպիսով կազմվում է ց-ի լրիվ շարքը.

սնս. ց,	զենդ. ց,	հայ. կ,	սլ.-լիտ. ց
j	j, zh	k	d

(Գուցե նաև ժո-ել «թախանձագին խնդրել» =զենդ. jad «խնդրել» և Ժիբ, ժր-նոթյուն =սնս. jira «արագ, Ժիր»):

բ) ց-ն սանսկրիտում հանդես է գալիս որպես յ, ղենդ. z, հայ. ծ, սլավ. z, լիտվ. ž, հմմտ. 1) սնս. aja, ajā «այծ, նոխազ», ղենդ. azi, հայ. այծ, լիտվ. ozys «նոխազ», հուն. αἶζ. 2) սնս. ajina «մորթի», ղենդ. izaēna, եկսլ. jazino. 3) սնս. bhūrja «կեչու մի տեսակ», օս. barse (=barze) «կեչի», եկսլ. brēza, լիտվ. berzas. 4) սնս. jar «ծերանալ», ղենդ. zaurva «ծեր», օս.

²⁰ ghenā-ն սակայն=gñā, իսկ jeni=geni կամ gāni:

²¹ Դրանից պետք է անջատել սնս. ajinat=զենդ. zinat=նպրս. adinā «խեց, վերցըրեց»: Հետևապես նպրս. ai-ն չի համապատասխանում սնս. ji-ին «հաղթել»՝ jaya-ի ներկայի հիմքին, ինչպես կարծում է Ֆիկեր (W. էջ 323): Արիական ց, j=սլ.-լիտ. g համապատասխանություն մյուս օրինակները կարելի է գտնել Ascoli, Vorlesungen, էջ 93—94:

zarond «ծեր» (=սնս. jarant-, հուն. γέρων-) հայ. ծեր, եկուլ. zireja, zireti «հասունանալ»։ 5) սնս. jnā «իմանալ», ղենդ. zan (zhnâtar), օս. zond «դիտելիք», հայ. ծանեայ (կառարկալը), ծանալք, եկուլ. znati, լիտվ. žnoti. 6) սնս. jan «ծնվել», ղենդ. zan, օս. zanag «երեխա», հայ. ծնանիլ, անծին, եկուլ. zeti, լիտվ. žen-ta-s «փեսա»։ 7) սնս. marj «սահել, շոշափել», ղենդ. marez, եկուլ. mlüza, լիտվ. mëlzu. 8) սնս. jambha, jambha «ծնոտ», ղենդ. zafan «երախ» (աֆղաներեն zhāmah իդ. «ծնոտ», բելուջ. daf=պրս. dih-an «երան»), հայ. ծով—«խորք», եկուլ. zäbü «ատամ» (հուն. γόμφος, γάρφύ). 9) աֆգ. zarai, zarai «սերմ, կորիզ, հատիկ», եկուլ. zrino «հացահատիկ»։ նաև 10) սնս. aj «չել», ղենդ. az, հայ. ած-ել. 11) սնս. rajata «արծաթաճերմակ, արծաթ»=ղենդ. erezata, հայ. արծաթ. 12) սնս. rjipya «վերասւղաց», ղենդ. erezlfa «բաղնի», հայ. արծիւ. 13) սնս. jānu «ծոռնիկ», պրս. zānu, ղենդ. zhnu, հայ. ծուճ (ծե-նու-ր). 14) սնս. bukka (պրակր.) «ալժ», ղենդ. būza, հայ. բուծ. 15) ղենդ. varez «ամեն»=հայ. գործել, հուն. Φέρει-. 16) օս. zūn «ծանր», zūn-argh «թանկ»=հայ. ծանր. հիմքը՝ ծանու։

II. gh-ի նեղքումը gh և gh¹-ի։

ա) gh-ն հանդիս է զալիս որպես սնս. gh, ղենդ. g, gh, հայ. գ, սլ.-լիտ. g. հմմտ. 1) սնս. megha=ղենդ. maēgha «ամպ», օս. miega «մշուշ, ամպ», հայ. մեգ, լիտվ. migla, եկուլ. mīgla «մշուշ, ամպամածութուն»։ 2) սնս. gharma «տաք», ղենդ. garema, օս. ghar, gharm «տաք», հայ. ջեր-ին, ջերմ, ջերմում=սնս. ghr̥nomi (j-ն երկրորդաբար՝ g-ից), եկուլ. go-rēti «այրվել», grēti «տաքացնել»։ 3) սնս. dārg̥ha «երկաթ», ղենդ. daregha, եկուլ. dluḡu, լիտվ. ilgas. 4) ղենդ. gram, «զայրանալ», եկուլ. grūm-eti, gromū, լիտվ. grumēnti, զոթ. gramjan. 5) սնս. jangha «ոտ», ղենդ. zanga, zangra «ոտ», լիտվ. zengliū, zeng-ti «քալել»։

Ինչպես ց-ն երբեմն սանսկրիտում j և ղենդերենում j, zh է դառնում, այնպես էլ gh-ն երբեմն սանսկրիտում h, ղենդերենում j, zh, հայերենում ժ է դառնում։

6) սնս. druh «վշտացնել», drogha «վիրավորանք», ղենդ. druj, druzh «սուել, խաբել» draogha-ի կողքին սուտ, խաբեական», հայ. դժր-ել, դժ-ել. 7) սնս. ahi «օձ», ղենդ. azhi, հայ. իժ, լիտվ. angis «իժ» (լատ. anguis, հուն. ἔχιδ, ὄφις). 8) սնս. muh «սխալվել», moha և mogha, ղենդ. maogha' ashemaogha-ի մեջ. 9) սնս. duhitar, ղենդ. dughdhare, նպրս. dukhtar, հայ. դուստր—դուխտր, լիտվ. duktė. 10) սնս. raghu «վաղելով, վազող», ղենդ. reñj, «կայտառ, արագաշարժ լինել», հայ. արագ, երագ, սնս. laghu «թեթև», եկուլ. līgūkū «թեթև»։ 11) սնս. han «խփել», ghna-ի կողքին, նաև ghana «մանրող, մահակ», ghanāghana «կուլասեր», ghātaka «սպանիչ», ղենդ. zan, 3-րդ դ. հոգն. jaghneñti, հայ. գան-ել, լիտվ. gink-las, genū, սլավ. gūnati, 1-ին դ. եզ. žen-a. 12) սնս. arh «վաստակել, արժանի լինել», arg̥ha «զին, արժեք», ղենդ. arej «արժանի լինել», arejañh «զին», հայ. արգին, անարգել, յարգ, յարգել, բայց նաև՝ արժանի²². 13) ղենդ. snizh «ձյունել», լիտվ. snig-ti (vīšei, ևատ. nix, nivis). 14) պահլ. jurdāk (garda+վերջածանցը), հայ. գարի, ևատ. hardeum, նխ. gardha. 15) սնս. dah, ղենդ. dazh, լիտվ. degū «այրել»։

²² Այդպես է նաև տոյժ՝ տուզ-ան-ի կողքին և հավանաբար նաև օզ-ն, օզ-ն-ախան, օզ-նու՝ օժ-անդակ, օժ-իտ-ի կողքին։

Հետևապես *gh*-ն ներկայանում է հետևյալ շարքով.

սնս. *gn* = *gh*. *g*, *gh*, հայ. *q*, սլ.-լիթ. *g*
 h *j*, *zh* *q*, *d*

բ) *gh*¹=սնս. *h*, զենդ. *z*, հայ. *q*, *đ*, լիտվ. *ž*,

1) սնս. *aham* «ես», զենդ. *uzem*, հայ. *bu*. (եզ-ից), *hlyu*. *azū*, լիտվ. *az* (*asz*). 2) սնս. *añhas* «վախ, նեղություն», զենդ. *azañh*, հայ. *նիազ*, ան-
 ձուկ, (ոձ), *hlyu*. *āzūkū*. 3) *mih* «միզել», *meha* «մեզ», զենդ. *gaomaēza*,
maēsman, օս. *mēzun* «միզել», հայ. *մեզ*, միզել, լիտվ. *mēzu*. 4) սնս.
darh «ամրացնել», զենդ. *darez* «ամրացնել, պահել», հայ. *հանգեթ* (օս. *da-
 rez* «հագորտում», նպրս. *darzi* «դերձակ»=քրդ. *terzi*, հայ. *դերձակ*), *hlyu*.
drīzū «fortis», լիտվ. *dirzas* «փոկ» (զենդ. *dareza* կապանք, շղթա),
 5) սնս. *vah* «vehere», զենդ. *vaz*, հայ. *վազել*, *hlyu*. *vezā*, լիտվ. *vezū*.
 6) սնս. *plīhan*, զենդ. *spereza*, *hlyu*. *slezena* «փայծաղ». 7) սնս. *hari*,
harita «դեղին», զենդ. *zairi* «դեղին, ոսկեգույն», *zairita*, հայ. *զառիկ* «դե-
 դին, ոսկեփայլ», *hlyu*. *zlato* «ոսկի» *zelenū* «կանաչ». 8) սնս. *hu* «կանչել»=
 զենդ. *zu*, հայ. *ն-զով-ք*, *hlyu*. *zovu* «կանչել». 9) սնս. *hotra* «զոհ», հայ.
ձօհի (=zavan-ya) «(եկեղեցական) նվիրաբերում». 10) սնս. *bahu* «շատ»,
 հայ. *բազում*. 11) սնս. *lih* «լիզել», հայ. *լիզել*, *hlyu*. *lizati*, լիտվ. *lėž-ti*.
 12) սնս. *hīma* «ձմեռ», *hemian* «ձմեռ», զենդ. *zīma*, հայ. *ձմեռ*
 (*zimara*+*n-ից*, հմտ. *դուռն*=*dhura*+*n*, ամառն=զենդ. *hama*), *հիւն*
 (*ghaimian-ից*), *hlyu*. *zīma*, լիտվ. *zēmā*: Հայերենի համար հմտ. *նաև*
 13) *au-bi* (=az-el), սնս. *ah*, հուն. *ἄλ*. 14) զենդ. *dehi*, զենդ.
uzdaēza. 15) *npā*- «ամորձի»²³=զենդ. *erezi*, հուն. *ἐρεζ*. 16) *parā*=սնս.
barhis, զենդ. *barezish*. 17) *parāp*=սնս. *bṛhat*, զենդ. *berezat*. 18) *ābā*=
 զենդ. *zaohañh*, արմատը սնս. *īad*=հուն. *χαδ*. 19) *āh*=սնս. *haya*.
 20) *ābā*=չար. 21) *ānū*=հպրուս. *zūkans* (հոգն. հայց.), լիտվ. *zuvis*.
 22) *nqñi* (=ag^hanya), *hlyu*. *ježi*, լիտվ. *ezys* (ag^hya), հուն. *ἐζυγος*.
 23) *hñā* (հնձ)=սնս. *simha*. 24) *lñqñ*=լիտվ. *lėžiūvis*:

Հենց այստեղ պետք է ուշադրություն դարձնել նաև մի քանի թվացող շե-
 փոխանքների վրա²⁴, որոնցից պարզ կդառնա *g* և *g^h*-ի, *gh* և *gh^h*-ի հարաբերու-
 թյունը: Մենք վերևում տեսանք, որ սնս. *yuj*=զենդ. *yuj*-ի նման մի ձև պետք
 է հանգի *yug* արմատին, որի *g*-ն հայերենում պետք է ներկայացված լինե-
 րեստանդավայինով, որը իսկապես գտնում ենք *qog*=*yoga*-ի մեջ: Սակայն
 մենք գտնում ենք նաև *id*-ի, որը նախնական *yug^h*-ից է ծագում (որ սանսկ-
 րիտում և զենդերենում չի պահպանվել) և այդ պատճառով հայերենի համար
 պետք է կանխադրել *yug* և *yug^h*, որոնք անշուշտ նախապես նույնն են եղել:
 Այնուհետև, այս երկու *g*-երն էլ սկզբնապես տարբեր չեն եղել, այլ մի *g*-ն
 ճեղքվել է երկուսի, ընդ որում այն մեծ մասամբ մնացել է որպես *g*. մասամբ
 դարձել է *g^h*. նույնը վերաբերում է արիական *g*-ին *gabh* արմատի մեջ, երբ
 մենք այն գտնում ենք 1) սնս. *gabhira* «խոր», զենդ. *jāfra* «խոր», *jānu*
 «խորություն» ձևերում և 2) սնս. *jabh* «երակը բացել», զենդ. *zāfan*, *zā-
 ra* ձևերում. այնուհետև *sarg* և *yag* արմատների *g*-ին, երբ մի կողմից կա

²³ Առանձին սահմանվել է որ *ā* «արու»=qui testiculos habet. նաև Ավգերյանի հայ-
 ադերեն բառարանում՝ որ *ā* «արու»=castrated, ամորձիք—testicles:

²⁴ Անկանոնություն է թվում նաև սնս. *mah*=զենդ. *maz* հայ. *մեծ*, սնս. *hanu*=պրս.
zanakh, հայ. *ծնոտ*. սակայն հայերեն բառերը ձևովում են *հ-ե*. *meg* և *genu* նախաձևերին:

սնս. sarga և yaga' sarj և yaj-ի կողքին, մյուս կողմից՝ sarj=զենդ. harez, նիւ. sarg¹, yaj=զենդ. yaz, նիւ. yag¹, ինչպես նաև gar ժամշվել, դառամել, հնանալ՝ արմատի ց-ին, երբ այն ի հայտ է գալիս g¹ar ձևով, «ծերանալ» իմաստով և granum-ի մեջ «հատիկ»=եկսլ. zrino, և մյուս կողմից gar ձևով լիով. girna=եկսլ. zriny—գոթ. quairnus «երկանք»-ի մեջ: Նույն վիճակն է նաև gh-ի դեպքում, որը մենք տեսնում ենք հ.-հ. migh²⁵ արմատում՝ ճեղքված երկու ձևի՝ migh : maigha «ամպ» և migh¹ : maigh^{1a} «մեղ»: angh արմատը սնս., զենդ., լիով. և այլն հանդես է գալիս «օձ» իմաստի համար angh ձևով, հայերենում, ընդհակառակն՝ angh¹—օձ, սակայն այստեղ ևս իժ-ի կողքին (angh¹i՝ eghi-ի կողքին), ինչպես լծել՝ զոյգ-ի կողքին, իսկ սանսկրիտում anghas-ը՝ amhas-ի, anghri՝ «ոտք» amhri-ի կողքին: Սակայն որքան լավ այստեղ հայերենում g¹, gh¹-ը կարող են հակադրվել մյուս հ.-հ. լեզուների, g, gh-ին (լծել և օձ բառերում), նույնքան լավ կարող են նաև արիական-սլավոնական լեզուներից մեկի g, gh-ն հակադրվել մնացածների g¹, gh¹-ին, ինչպես այդ կատարվել է, օր. լիով. gesti, եկսլ. gasnati, «հանդչել»=սնս. jaś «սպառվել, անհետանալ», զենդ. zah «անհետանալ» անցողական՝ «թողնել», բառերում, որտեղ սլավոնական լեզուներից հն համապատասխանում է արիական g¹-ին, և եկսլ. gasl «սագ», օս. ghaz, նպրս. ghaz, հայ. սագ (դրամիոված՝ gas=gans-ից)=սնս. hamisa, հուն. γῆς, լատ. anser, լիով. žasis, որտեղ իրանա-սլավոնական gh-ն հանդես է գալիս մյուս լեզուների²⁶ gh¹-ի փոխարեն: Ժիշտ ալդակն էլ k-ի շարքում հակադրվում են՝ եկսլ. kamen-, լիով. akmen և արիական açman-ը, լիով. klausā, klausyti և սլ. sluti, slova, sluchū (=զենդ. sraosha), պրուս. pecku և արիական paçu, եկսլ. svekrū և լիով. szeszura=զենդ. qasura: Նման կազմությունները տե՛ս Fick, Wörterbuch, III, էջ 516՝ kak=k¹ak, էջ 522՝ karva=k¹arva, էջ 526՝ kardha=k¹ardha, էջ 539՝ kram=k¹ram, էջ 540՝ kruk=kruk¹: Իրանց է միանում այն, որ ըստ Յոհ. Շմիդտի սնս. çiras (k¹er արմատից) համապատասխանում է գոթ. hvairnei-ին (kar արմատից) և ըստ Վենդիշմանի (Ztsch. XXI, էջ 390) սնս. kar-na «ականջ» cru (=çaru) արմատի հետ է կապվում, այլև այն, որ նույն գիտնականը նույն տեղում ենթադրում է, որ սանսկրիտում k-ն c=k-ի կողքին էլ ավելի հաճախ կարող էր հանդիպել²⁷: Եվ ալդակն է հարաբերում, եթե նորից անդրադառնանք այդ հարցին, հայ. օձ-աճել (ang¹), սնս. anj, anakti-ին և հայ. բոյժ սնս. bhuj, bhunakti: Այդ նշանակում է ոչ այլ բան, քան այն, որ նախապես եղել է միայն մի k, մի g, մի gh, որոնք միայն հետագայում են ճեղքվել k, k¹-ի, g, g¹-ի, gh, gh¹-ի:

²⁵ Սնս. mih-ը բայական ձև է, բայց migh-ը կա նաև ni-meghamana դերբայում (Fick, Wörterbuch, էջ 178):

²⁶ Իմիջիպալոց սնս. hamsa-ն կարող է փոխարինել ghansa-ին, ինչպես han-ը ghan-ին, ուստի մեր դեպքում լիով. gh¹-ին կհակադրվի արիա-սլավոնական gh-ն: Մի այլ դեպքում, թվում է, եվրոպ. g-ի փոխարեն իրանական g¹ պետք է լինի, այսինքն՝ երբ եվր. yaga «սառույց» (հին իրան. aig, լիով. iza-s ան. yakl)=մաղանդարանի yagh «սառույց» համապատասխանությունն ենք դնում: Սակայն ժամանակակից իրանական մյուս լեզուները ունեն yakh (օսերեն ix, yex) ձևը, փազենդը yag, որը թվում է առաջացած yasa-ից: Փազ. yah-ը yaca-ին=զենդ. isi (ici) հանգեցնել թերևս օսերենը թույլ չի տալիս, հետևաբար երևի զենդ. isi պետք է ծագած լինի ishi-ից (?):

²⁷ Հմմտ. նաև Ascoli, Vorlesungen, էջ 34—35:

Նույնը պետք է ընդունեն նաև նրանք, ովքեր սնս. jaŋgha=զենդ. zanga, լիտվ. zengiu (գոթ. gaggan) հանգեցնում են կրկնությունը կազմված նախնական մեկ ghagh արմատին: Քանի որ սնս. jang=զենդ. zang չի հանգում նիս. g'angh-ին, որը նույնպես պետք է առաջացած լիներ ghangh-ից, այնպես, ինչպես արիականում նիս. ghanghan պետք է jaghan դարձած լիներ: Վերջին դեպքում արիականում կրկնվում է այն պրոցեսը, որ արդեն դրանից առաջ կատարվել էր հնդեվրոպական նախալեզվում:

Եթե այժմ համեմատենք k-ի շարքը g-ի և gh-ի շարքերի հետ, ինչպես դրանք պարզվեցին մեր քննությունից՝

	k=սնս. k, զենդ. k, հայ. կ, սլ.-լիտ. k	
k	c	s
k ¹ =	c	s (z, g) սլավ. s, լիտվ. sz
g	g	g
g	j	j, zh
g ¹ =	j	z
gh=	gn	g (gh)
gh	h	j, zh
gh ¹ =	h	z

ապա ի հայտ է դալիս այս շարքերի լիակատար համապատասխանությունը, որից անհրաժեշտորեն պետք է եզրակացնել, որ նախնական ժամանակաշրջանում արիացիները, հայերը և սլավոնալիտվացիները միմյանց հետ առանձնապես սերտ հարաբերությունների մեջ են եղել: k, g, gh ետնալեզվայինների այս ընդհանուր զարգացումը երկու ուղղությամբ՝ k, g, gh և k¹, g¹, gh¹, չէր կարող զուտ պատահական լինել, և եթե այդպես լիներ, ապա մեր այս լեզուների բոլոր այն առանձնահատկությունները, որոնց հիման վրա մենք դատում ենք նրանց ազգակցական կապերի մասին, կարող են զուտ պատահական լինել:

Մասնավորապես հայերենի կապը արիական և սլավոնական լեզուների հետ քննելիս առաջին հերթին պարզվում է, որ հայերենը g-ի (=կ և ծ) և gh-ի (=գ և զ, ձ) խիստ տարբերակումով ավելի հին աստիճանի վրա է գտնվում, քան սլավոնական և իրանական լեզուները, որոնք, ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, g-ն և gh-ն նույնացրել են: Այս երևույթը միանգամայն ներդաշնակում է այս լեզուների այլ հնչյունական հարաբերությունների հետ: Քանի որ, եթե սանսկրիտը և հայերենը ընդհանրապես ճշտությամբ պահպանել են շնչեղ և պարզ ձայնեղների տարբերակումը (gh—g, dh—d), իսկ իրանական և սլավոնալիտվական լեզուները կորցրել են այն, ապա պետք էր նաև սպասել, որ առաջին երկու լեզուները նիս. gh¹ և g¹-ի տարբերակումը պետք է պահպանեին, իսկ վերջին երկու լեզվաճյուղերը՝ կորցնեին, այսինքն՝ նույնացնեին gh¹-ը g¹-ի հետ և վերջինս փոխարկեին սուլականի (զենդ. z=սլավ. z —լիտվ. z): Սանսկրիտը և հայերենը իրենց հերթին տարբերվում են այն բանում, որ սանսկրիտը նախալեզվի g, gh և g¹, gh¹-ը որոշ դեպքերում նույնացրել է (այնպես որ այժմ սնս. j=g և g¹, h=gh և gh¹), մի բան, որ զենդերենում և սլավոնալիտվականում չի կատարվում, մինչդեռ հայերենը շարունակում է իրարից անջատ պահել ոչ միայն պարզ ձայնեղներն ու շնչեղ ձայնեղները, այլև g, gh-ն և g¹, gh¹-ն, և այդպիսով այս առումով նախնական հնչյունական հարաբերությունը ավելի հարազատ է պահում, քան արիական և սլավոնալիտվական լեզուները:

Սակայն մենք պետք է հայերենի կապը արիական և սլավոնալիտվական լեզուների հետ մի ուրիշ և ավելի կարևոր կողմից քննենք: Նշված լեզվաընտանիքների միջև հիմնական տարբերությունն այն է, որ սլավոնալիտվական

նում ետնալեզվայինները (g, k) սկզբում պահպանվում են անփոփոխ, իսկ արիականում, դրան հակառակ, փոխարկվում են քմայինների, քանի որ հին արիական k, g, gh հնչյունները մասամբ մնացել են հենց ետնալեզվայիններ, մասամբ էլ սանսկրիտում c, j, h (h, gh) և զենդերենում c, j, zh քմայինների են վերածվել, և հատկապես երեք հիմնական դեպքում. 1) երբ նրանց նախապես i կամ y է հաջորդել. օր.՝ jiv «կյանք», 2) վանկերի կրկնության դեպքում, օր.՝ cakra «անիվ», caksh «կերակուր», 3) արմատի վերջում, երբ այն չունի որևէ հաջորդող բաղաձայն հենարան. իսկ գոյականների ածանցման ժամանակ, ինչպես երբեմն պատահել է, ձայնավորից առաջ անփոփոխ են մընում, օր.՝ pac «սփեր», vac «խոսել», բայց՝ paka և ukta: Սակայն քմայնացումը տարածվել է նաև այս սահմաններից դուրս, թեև ոչ շատ լայն չափերով, և այս դեպքում այդ պատահել է ավելի հաճախ k-ին, իսկ g և gh-ին՝ ավելի սակավ. հմմտ. արիական ca «և», catvar «չորս», car «գնալ, բռնել», pancan «հինգ», սնս. jatara «որովայն», սնս. han=զենդ. jan «հարվածել»: Այն համապատասխանությունը, որով հնդկերենը և իրանականը իրականացրել են քմայնացման պրոցեսը, մի հաստատուն ապացույց է, որ այն ընթացել է արդեն արիական ընդհանրության շրջանից սկսած: Եվ քանի որ այն այս ձևով հանդես չի եկել որևէ հ.-ն. լեզվաբնույթում, ապա այս քմայնացումը արիականի համար առանձնապես բնորոշ է: Այդ պատճառով այն պետք է մեզ որպես փորձաքար ծառայի իմանալու համար, արդյոք հայերենը իրանականն լեզու է, թե ոչ: Արդ, 39 էջում մենք արդեն գտանք, որ հայ. ոլժ, բաժ, բուժ = արիական aujas, bhaĵ, bhuĵ, թերևս նաև ժաել—զենդ. jad, ժիր=սնս. jira և 40 էջում՝ դթել, դթել=սնս. druh, զենդ. druzh, իժ=զենդ. azhi, արժանի=սնս. arh, զենդ. arej (նպրս. arzân) և պետք է հանուն այս ձևերի հայերենը որպես իրանական բնորոշենք: Միայն մի բան պարզ չէ, ինչու է արիական j-ին համապատասխան ոլժ, բաժ, բուժ արմատներում հանդիպում ժ հնչյունը, քանի որ հնչյունական տեղաշարժի համաձայն պետք էր սպասել հ: Մինչև այժմ ընդհանրապես չի գտնվել հայ. ձ=արիական jh և հայ. ց=ար. j համապատասխանության օրինակ, որի պատճառով նախ պետք է ենթադրել, որ ձ-ն և ց-ն առաջացել են միայն հետագայում հայերենի առանձնացումից հետո²⁸ (հետևաբար z-ն արիական ժամանակաշրջանում պետք է հանդես գար j-ի և c-ի փոխարեն): Իմիջիայլոց հայ. ց=պրս. c համապատասխանությունը շատ հաճախ է հանդիպում, հմմտ. ցանկ=պրս. cang. ցաշ՝ իր ածանցյալներով հանդերձ՝ ցաշել, ցաշակ, ցաշակել=նպրս. cashîdan, ցապուկ=նպրս. câbuk, ցալալ=պհլ. carp, ցրալ=նպրս. ciragh, վհալ „solvere“=նպրս. guzâr (vicar-ից), ոռնիկ=նպրս. rûzeh, ruzî, զենդ. raocanh «օր» և ալլն: Սակայն այս օրինակները չափազանց շատ բան են ապացուցում, պարսկերենի հետ համապատասխանությունն այստեղ շատ մեծ է, մինչդեռ մենք առաջ ալոպիսի բան բնավ չէինք գտնում: Եվ քանի որ այնպիսի բառեր, ինչպես ցրալ և ոռնիկ որոշակիորեն փոխառյալ են (դրանք գտնում ենք նաև վրացերենում), ապա վերը նշված բառերից մյուսները ևս փոխառյալ կդառնան: Այդ վերաբերում է նաև պատմութան-ին=պհլ. patmucan «հագուստ», այն դեպքում, երբ մութակ-ի ց-ն (=նպրս. mûzah) կարող էր առաջացած լինել հայերենում՝ մուկ արմատի կ-ից=պհլ. mōc (աֆղ. moc-ařah իգ. «կոշիկ»): Սակայն արիական քմայինը հայերենում հնչյունական տեղաշարժի համաձայն մեզ ներկայանում է որպես չ. չոք=catvar²⁹, գոչել, կոչել=vocare և ատամնալինի վերածված՝ g. մրց-իլ=զենդ. merēnc ռնգայնացած՝ mars ձևից (իմաստի

²⁸ Հայերենի առանձին զարգացման ընթացքում երկրորդալին քմայնացման հետևանքով առաջացել են ջեմ=սնս. gharna, նպրս. garm և ջերմ=սնս. krmî, պհլ. kirmî:

²⁹ Քառ տարբերակը հարաբերում է չոք-ին այնպես, ինչպես զենդ. tûrya-ն զենդ. cathvare-ին, tûrya=tvâr-ya pma=tvâr. p=tv, ինչպես puma=dvi-çanti:

համար հմմտ. 𐎠𐎼𐎷𐎡𐎴 «կովում է»=սնս. mīnati «փշրում է, ջարդում է»), հաց=pac, բանձր (թանցր-ից), զենդ. tancishta և վերջապես լոյս=զենդ. raocañh, հպրս. rož³⁰: Հետևապես հայերենը արիական լեզու է: Բայց եթե այժմ համեմատում ենք հայ. եկի, կեալ, կով, կին, երեկ, բեկ, զան բառերը (էջ 38 և հաջ.) իրենց արիական ցեղակիցների հետ, ինչպես նաև հինգ-ը (pen-can-ից) արիական pancan-ի և լք-անել-ը արիական րւց-ի հետ (երգ-ը=սնս. arca, արմատը՝ arc և քան-ը—լատ. quam, քանակ=quantum, զենդ. cwant, հպրս. cand շենք քննարկում), ապա պարզվում է, որ հատկապես այն դեպքերում, որոնք արիական քմայինների մասին Ասկոլիի փայլուն հետազոտության համաձայն պետք է առանձնապես արժեքավոր համարվեն, հայերենը վճռականապես բաժանվում է արիականից և մոտենում է սլավոնալիտական լեզուներին:

Վերը շարադրվածի համաձայն մենք այժմ կարող ենք լրացնել 43 էջում տրված K-ի շարքը՝

հ.-ե. k=սնս. k,	զենդ. k,	հայ. կ,	սլ.-լիտ. k
c	c	կ, խ. չ, ց, ս	

և ց-ի ու ցհ-ի շարքերի հետ: զուգահեռությունը այժմ լիակատար կերպով վերականգնվում է:

Վերը կատարված ամբողջ քննությունից այժմ մենք որպես ընդհանուր արդյունք ստանում ենք հետևյալը.

Հայերենը ըստ նախնական ետնալեզվայիններից սուլական հնչյունների առաջացման պատկանում է արիական-սլավոնալիտական լեզուների շրջանին: Արիական լեզուների հետ այն մասամբ համաձայնում է ետնալեզվայինների բնականացումով, մյուս կողմից սակայն ետնալեզվայինները սլավոնալիտականի նման անխաթար է պահում և այդ պատճառով էլ չի կարող ոչ ստորակարգվել արիականին (այժմյան իմաստով), ոչ էլ նրանից անջատվել: Այդ պատճառով այն չի կարող նաև իրանական համարվել, թեև այն s-ն հ-ի է վերափոխում և որոշ բաղաձայններ և բաղաձայնների խմբեր (ինչպես հայ. ջխ—իրան. š—արիական kš) նույն կամ նման ձևով է ներկայացնում: Այդ պատճառով այն որպես ինքնուրույն լեզվանյութ պետք է տեղադրել իրանականի և սլավոնալիտականի միջև:

Մ Ս Ս Ն II

Եթե այսպիսով հայերենը գտնվում է իրանական և սլավոնական, այսինքն՝ արիական և եվրոպական ճյուղերի միջև, ապա մնում է նաև հետազոտել, ինչ դիրք է նա զբաղում եվրոպական լեզուներին բնորոշ առանձնահատկությունների նկատմամբ, որոնցով սրանք խստորեն տարբերվում են արիականից, այսինքն՝ պետք է ուսումնասիրել, ունի՞, արդյոք, հայերենը եվրոպական լեզուներին հատուկ՝ a-ի ճեղքումը a և e-ի, r-ի ճեղքումը r և l-ի, իսկ լատապաշարի մեջ ունի՞, արդյոք, եվրոպական լեզուների հետ նշանակալից աղերսներ, թե ոչ: Անցնենք այդ հարցերի պատասխանին:

1) a-ի ճեղքումը a և e-ի:

Միանգամայն ճիշտ է Ֆիկի տեսակետը, որ ձայնավորական համակարգի մեջ ամենակարևոր տարբերությունը եվրոպական և արիական լեզուների մի-

³⁰ Այստեղ կհարմարվեն նաև հայ. շ=սնս. cñ=ñju. sk ներկայի հիմքակազմի մեջ՝ sk=հուն. σκ: հայ. հալ-հա-չեմ=չիլոսչա, աորիստը՝ ծանեայ, և չու-նիս. sku. Ascoli, Vorlesungen, էջ, 189:

[illegible]

Չնայած այն հանգամանակին, որ Երևանի եկրոպական եղանակով ձ-ն տրոհում է ձ, օ, օ-ի և դրանով իսկ խիստ կերպով տարբերվում արիական ցեղակից լե-
զերեններից, անհայտն է, որ Երևանի լեզվաբանական ղեկավարում եկրոպականի հետ չի հա-
մաձայնում: Սակայն որպեսզի կարողանանք նաև առանձին ղեկավարում համե-
մատական քննությունը ձևականորեն մենք պետք է նախապես ծանոթանանք
սխիսերին ձայնավորական հավանաբար ընդհանրապես: Այն ունի հետևյալ
սխիսերն.

-ձի նոսրորդը դառնալով ձի մեկը:

Երկարացում³³

դումաշքից սմբուղ $a \left(\begin{smallmatrix} a \\ e, f, u, g, h, k, l \end{smallmatrix} \right)$ զի՛

a

[illegible]

e, i

- արդյ զո՞րքով մարկայիս զյանիս ...
 - Դիկարքով զանո՞ւ ք Կոմիտասեանս քննա...

44. U

Դիմի լառն աղբիւնն ինչպէս արեւմտեան միայն իշխող շէտաբանական օրենքը հե-
 ռակրացիլ է. վերջոյն ՌԱՍԹԳԱՅԵՐԻՆՍԿԻ՝ Բառի վերջնթեր վանկը և պայմանավո-
 չեցաւ պէտք ունենալ անվորի անկումը, այնպես որ այժմ միշտ
 վերջին վանկէն զարկեցողութիւն և ուն, ինչպես նաև նրանց հերթագա-
 յութիւնները Գեղարք վերջնական հպանակ միայն շէտի շնորհիվ, այսինքն՝
 Թիք միջոցապիտիւն ինչպէս վանկային Եւրոպայում: Բայց երբ մի նոր վանկի ավե-
 շտային լծողանալն նրանց խորհրդին են շէտը, ապա է-ն վերածվում է ի-ի,
 ոյ-ր՝ ու-ի, իսկ ի-ն և ու-ն սղվում են: Օր.¹ի. արմատը՝ vid=հայ գիտ, բայց
 անորոշում՝ գտ-անել, նխ. vinaça=նպրս. gunâh, հայ. վնաս, լիաճայն
 (երկար)՝ մեզ. արմատը՝ migh, մեզ. արմատը՝ migh¹, մաս. mih, սակայն
 սեռականում՝ միգի, միգի³¹. Ու. խրմատը՝ yuj, հայ. լուծ, անորոշը՝ լծել,
 լիաճայնութիւն՝ լոյս՝ raucah-ից, արմատը՝ ruc, բայց սեռականում՝ լուսոյ:
 չա ստիւծութիւն մ մալամադդ ի

իսկ հետքեր են այն հոգվածուի խի փոխարեն, ինչպես այն արտասանվում է բուն Պարսկաստանում, քրե. *Լն հին Զ.ս. որոն արս նագում է:*
Հնդ. barzond «արած», արոն՝ Էրոն՝ «զերտ», zond, zund «գիտելիք», zōnun «գրեմենայ», fondz «հինգ», dzorun «խոսիչ», չոր «արև» (=svar), չորս «ուտել» (=svar):
 Ինչ որոշան քիչ բան է նշանակում այստեղ օ-ն, ցույց է տալիս kharōn=զենդ. karana «քրիստոս», որը հնդկական և տալաուրի լաբրալուրի դատում է kharattha, զիդդրի բար-բառում՝ kharatha.

33 Նկատենք, որ ձայնավորների երկարությունը հայերենում չի նշվում, որի պատճառով
 այս տեղի վրա երկարությունը նշվում է չորս տարբերությամբ՝ երկար, երկարացված, երկարացված-կարճացված և կարճացված։ Սակայն դա միայն գրության պակասությունն
 է, որը հաղթահարելու համար պետք է շնորհել, որ երբ ա, ւ, ւ-ն հիմնական ա, յ, ւ ձայնավոր-
 ների լիաձայնությունն են, ապա երկար ձայնավորների արժեք ունեն, կամ նախադրեն աղ-
 ցիկի անբերան հնչյունների փոխարենը։ Օ-ն միշտ կարճ է։

34 Եւ խոյստեմէ իւրեմ հրոսման իրէն առորկ և քանի որ կարճ յ-ի զեպքուն միշտ, mizi-ն պետք է տալին մզի, մզի, նուրն ձեռով՝ lusoյ կտար լսոյ:

յայտնողից իսկույն պարզ է դառնում, որ գիտեմ, լիզեմ ձևերը ծագում են գեւտ-
 Լւմ, լիզ-Լւմ-ից, այսինքն՝ այս բայերն են լիզելու և լիզվելու շինական հիմքը
 գեւտ-Լւմ=veda + հետագայում ավելանում լիզ-Լւմ=lorgh-ում),
 որքանով որ մենք այստեղ գործ լունենք՝ գոյականից կազմված լիզելու հետ,
 ինչպես դա կարող էր լինել միզել-մեզ-կողքին՝ բացի դեպքերից, որտեղ
 հակառակն, չի փոխվում. բազում=անս. bahu, բազուկ=անս. bahu, արմ.
 անս. ah. նույնը վերաբերում է ու-ին³⁵, հմմտ. գոչել, արմատը՝ vac, գործել՝
 գործ-ի կողքին=բերչո. Ե-ն նույնպես մեծ մասամբ մնում է. հմմտ. մեծ,
 հուն. μέγας, սևռ. մեծի, երբեմն սակայն այն քնկնում է, օր. վտակ՝ գեւտ-ի
 կողքին, աստղ=աստ, տազր=հուն. ὄψερ, սևռ. աստել, տազեր. Լսկ), եթե
 այս Ե-ն հանդիպում է ռեգայինից կամ կրկնակ բաղաձայնից առաջ, ապա այն
 օրինաչափորեն փոխվում է Ի-ի³⁶. հինգ=quinque, հին=senex, սիրտ=herz,
 և այս Ի-ն, նիւ. Ի-ի նման, շեշտը կորցնելիս՝ մղվում է. հին. հենասու, սիրտ,
 սևռ. սրտի. Ուտի հայերենի համար պետք է ամենուր է դնել, որտեղ ստուգա-
 բանորեն սպասվող Ե ձայնավորի փոխարեն է հայտնվում Ի, Ի կամ լրիճ՝ սը-
 ղում. Ույզ պատճառով, եթե հայերենի ունենալ ելլողական լիզելուցից գիտավոր
 առանձնահատկութունը, մենք պետք է սպասենք գտնելու այն հայ. նիւ (ոչ=ելու.
 a (o) է բ) հայ. ե, ի, սղում=ելը. Ե համապատասխանությունները:

ա) Հայ. ա (n) = եկր. a(o): Այս համապատասխանության համար, բավական է մի քանի օրինակ բերել. ակն, աչք = oculus, ածեմ = ցաւ, տալ = dare, այլ = անոտ, այծ = ան, հայր = pater, գործ = opere, որք = quatuor, գործ = Feyerov, կով = βοF-ός, որձ (տե՛ս էջ 41, գալ, 23) = օչև, որք = օրφαναος, բնդ սմին թեքման մեջ նկատելի է նոր հատկութիւնները մեատեկանունները շհաշված) ամբողջութեամբ փոխարինել են ուրիշ փոխարինող պատճառով նրա. marta-, հուն. βρετο-, ալ. անդեն Բրալիս որպէս մարդո-, հմտ. սեռ.-տր. մարդոյ, գործ. մարդով, հոգն. սեռ. մարդոց, գործ. սարդով: Այստեղ հայերենը համաձայնում է լատիներենին և հունարենին հետ:

բ) Հայ. ե=եկր. e: Ֆիլը իր „Die ehemalige Sprachheimat der Indogermanen Europas“ (սելդոպալի հնդեվրոպացիների նախնական լեզվամիասնությունը) գրքի 425 էջում տալիս է սելդոպալական նախածինների ցուցակը որոնց պետք է e վերագրել։ Դրանցից են հայերենում գտնում ֆժ՝ հետևյալները. հայ. սիրտ—եկր. k¹ erd «սիրտ», ծնունդ—(ծնեօւս)—genai չ «ծնգութ», հինգ—pencan «հինգ», մեծ=mega «մեծ», մեղ—(medito-hy)=medhia «մեղքին», մեղք. մեղու. (μέλιττα)=melita «մեղր», ճարձ—(noit-nisodas)—եկր. yse-das «տեղ», հին=sena «հին», եւթն=septan «չորթ», աստղ=ster-սկեսար=svek¹ura, svek¹rû, վեց—sveks «վեց»։ Միայն մի—թվացյալ բացահայտության կա, որը հաստատում է օրենքը, այն է՝ փյլ—փյլե, ալմեղ—ալմեղ, զմեղ—զմեղ, օտոր. հետևապես փյլ-ը հանգում է e-ով այս հիմնածինը, միևնույն դրոշմն ընթացող սլավոնական անվանումները՝ հայր, մայր, եղբայր, քույր և այլն հայերենում միայն միևնույն անվանումներ են սելդոպալական լեզուներին։ Ֆիլիք մեղքերում են երկակի հիմքերից ե բայերից մինչև այժմ միայն բռն են հայտնաբերվել հայերենում. ed «ուտել» հայ. ուտ, որի ու-ն ինձ համար պարզ չէ, gen² «զլանել, խնայել». կեր՝ բարդությունների վերջում, հուն. πορ- «սպասարկում, պաշտպանություն»։

³⁵ Petermann, Grammatik, էջ 37. «բոլոր ձայնադիրներից առհասկապ չեն, որքան որքան երբևէ չի սղլում կամ փոփոխվում»։ Երբեք չեն հանդիպում այսպիսի փոփոխություններ։

[illegible]

պես *ber* «բերել, կրել», հայ. բերել, դրա հետ բեր «պտուղ», բեռն, է(ել)-ը որ-պես ի-ի լիաձայնություն³⁷ գանում ենք դեզ, նիս. *dheigh*=*ingere*, միզե, մեզե-ից, նիս. *meighati*, լիզե՝ լեզե-ից, նիս. *leigh*. դրան հակառակ լք-անե³⁸ առանց լիաձայնություն, եվր. *leikati* «թողնում է»։ Այս դեպքերին միանում են նաև միս=եվր. *memsa*, ամիս=եվր. *mens*, միսք=եվր. *menti*, կից=գոթ. *gino*, զից=լատ. *venum*, ձեռն=լեթ. հիմքը՝ չթ, սից=աեյթ, ձեր=չթթոտ, հերու=թթոտ, հեաք=լատ. *peda* (բայց ունի=*pāda*, գոթ. *fotus*), հեռի=թթա, գոթ. *falra*, վեր=աթթ. ձեթ, ես=էջ, *ego*, բայց եկուլ. *azū*, մնալ=թթա, միջա, լատ. *maneo*, ծն-անիլ, անծին, արմատը՝ *gigno*, *genui*, չիցթա, բայց ծանոթ, արմ. ծան, լիտվ. *zinoti* «իմանալ»։ Թեքման համար ե-ն կարևոր դեր է խաղում այնպիսի անվանակերտ ածանցների համար, ինչպես տեր=նիս. *tar*, այստեղից՝ ցուտը սեռ. դստեր, բայերի դեպքում՝ որ-պես հիմքակազմ ձայնավոր ամենատարածված բալայմբերում՝ բերեմ, բերես, բերէ և այլն. որպես ածական՝ այն դեպքերում, երբ վերջինս դեռ հանդիպում է՝ եկի, եղի, ետու³⁹, ետես, եզիտ։ Դրան հակառակ եվր. *e*-ի դիմաց հայ. *ա*-ն գտնում ենք դաշրն=զենդ. *dashina*, եվր. *deksina*, սակայն հայերեն բառը տ-ի փոխարեն դ ունենալու պատճառով փոխառյալ է պարսկերենից, բայց տառն հավաստի կերպով համապատասխանում է եվր. *dek*¹ *an*-ին. գուցե նաև վազել «*currere*» համապատասխանում է եվր. *veghe*- ներկայի հիմքին. վա-զել-ը կարող է նաև վազ-ի գոյականից առաջացած լինել։

2) Ի-ի ձեղքումը Ի-ի և Լ-ի։

Լ-ն հայերենում առկա է երկու Բ հնչյունների (ն և ր) և մեկ Ղ-ի կողքին, որը այժմ արևմտահայերենում ղ է հնչում, բայց հնում ներկայացնում էր հու-նարեն լ-ն։ Այդ սկզբնական Լ-ին եվրոպականում համապատասխանում է Լ, մինչդեռ Բ, Ռ-ին և Ղ-ին հակադրվում է եվր. Բ-ն։

ա) Հայ. Լ=եվր. Լ. Լալ, արմատն է *la* (Fick, Wörterbuch³, 747), Լայն, (*platan*-ից)=*πλατάνος*, հին իրան. *lethan*, Լափել=*λαπτω*, *lambo*, լիզել=*λεῖχω*, (հմտ. նաև հայ. լեզու), լի (=plana)⁴⁰, եվր. *palna*, Լ-նու-լ, եվր. *pla*, լուանալ=*πλάνω*, լոգանալ=*λόγος*, *lavo*, լոյս⁴¹=*lux* (լուս-ա-րեք=*lucifer*), լուսին=*luna*, լու⁴²=*pulex*, Լ-ել=եվր. *k¹lus*, նախն. արմատը՝ լու=*k¹lu* հանդես է գալիս կատարյալում՝ լուայ, լուր, Լքանել=եվր. *lik*, լեթա, լրիկ (գոհակ.) „footpavement“=եվր. *plara* «հատակ, գետին», լուծանել=եվր. *lug* (?), Լլանել=*deglutire*, ալլ=*alius*, գալլ⁴³=եվր. *valka*, և ածան-

³⁷ Որ այս լիաձայն ձայնավորը իսկապես հավասար է ե+յ, ապացուցում են այնպիսի դեպքեր, ինչպես բերե=ներկայի հիմք՝ բերե+յ=*ti*, ինչպես նաև այն հանգամանքը, որ ա+ի, յ էրբեր է շի տալիս։ Յուրահատուկ է ու-ի լիաձայնությունը, կամ նրա գրությունը՝ ոյ կամ ույ, հնում հավանաբար ոյ արտասանությունը։ Կարելի էր մտածել, որ յ-ն միայն երկարացման նշան է, և ոյ=ո, ինչպես եյ=ե։ Բայց եթե ոյ-ը պետք է երկար օ հնչյունը նշանակեր, ինչու հնում նոր ստեղծված գրով չարտահայտեին օ-ն, որի փոխարեն գրում են ով։

³⁸ Լքանել=*λεπταίνει*։

³⁹ Ներկան է ղ-նել-ը, որը հնչյունական օրենքի համաձայն պետք է հանգի ղե-նել-ի ձևին։ Ներկայի տալ ձևի հետ համեմատելիս ի հայտ է գալիս հայ. դե «դնել»։ տա «տալ» հոն. Յեծո համապատասխանությունը։

⁴⁰ Սակայն պարսկերենում՝ *pur*։

⁴¹ Բայց պրս. *rōz*, այժմ հնչում է *ruz*։

⁴² Լու=*plu*, եկուլ. *blūcha*, լիտվ. *blusa* (աֆղաներեն *vragah*=*vrazh'ah*) *prushâ*-ից, ինչպես հայ. նու=*plu*, *snucha*=աֆղ. *nzh'or*, *snusha*-ից։

⁴³ Սակայն պարսկերենում՝ *gurg*։

ցական 1-ն՝ մագիլ=ելր. naghla: Mar արմատը ինչպես և եվրոպականում տրոհվել է mar և mal-ի⁴⁴ մեռանիլ և մալիլ «տրորել, մանրել»:

բ) Հայ. ր, ու, դ=ելր. ր. սիրտ=cor, քիրտ=cor, կերպ=corpus, տագր=ծաղր, աստղ=շտղր, դուստր=մոչաշր, գործել=wirken, Բեթոն, լեարդ=yecur, մարդ=թոթո, վարդ=Բոթո, Բոթո, բերել=բերել, ծեր=չերոն, չորք=quatuor, արջ=ursus, ջերմ=warm, հարցանել=ելր. park¹, հայր=աշր, նույնպես և մայր, եղբայր, քոյր, եղբիւր=բրեւր, դուռն=մոռն, ձեռն=չեւր, արք=ելր. sarbh (sorbere), երդ-նուլ. օս. ard, art «երդում», սլավ. rotu, rota «երդում»։ Եւ միայն մի դեպք եւ գտնում, որտեղ հայ. ր-ին համապատասխանում է ելր. l սրունք=ելր. k¹launi, լատ. clunes:

3) Կան մի քանի բառեր, որոնք եվրոպական լեզուներում հանգում են հնչյունական այլ պատկերների, քան արիականում է։ Դրանք ի մի է բերել Ֆիկեր (Spracheinheit, էջ 424), ընդ որում դրանցից մի քանիսը, որ մինչև այժմ միայն որպես հնդկերեն են վկայված եղել, նշել է որպես արիական։ Այդ բառերից եւ հայերենում գտնում են 12-ը։ Դրանց մեջ արիական ձևի հետ համաձայնում են՝ ուն-այն=una, սեալ=սնս. չյաճա «սեալուր», եւ՝ az-ից=զենդ. azem (լիտվ. asz, եկվ. azū) և հավանաբար՝ ցամաք «երկիր», եթե այն առաջացել է ծամալ-ից=սնս. jam⁴⁵։ «Ձախ» բառի համար արիական savya (սնս. savya, զենդ. havya) ձևը վերականգնելուն արդել է հանդիսանում նոր պարսկերեն cap «ձախ»՝ skavya-ից ծագած, այդ պատճառով հայ. ահեակ, զենդ. havya «ձախ» բառերի համաձայնությունը սոսկ պատահականություն է։ Արիական ձև ունեցող այս երեք հայերեն բառերին հակադրվում են ակն = ելր. aki⁴⁶, միս = ելր. memsa, ծնոտ = ելր. genu, դուռն = ghvara (հնչյունական տեղաշարժի համաձայն), մագիլ = ելր. nagma, naghla «եղունգ» (սնս. nakha, նպրակ. nakhun, օս. nüx-ի դիմաց), եւթ-, ըթ- = ելր. andhara (հնչյունապես ավելի լավ կհամապատասխաներ ընդ ձևը գործիականի հետ՝ «տակ», բայց այն իմաստով տարբեր է)։ Հայ. ամիս = ելր. mens իր կողքին ունի նաև mah՝ մահիկ-ի մեջ — սնս. mas; Հայ. սիրտ-ը իր i = e-ով պատկանում է ելր. k¹erd ձևին, թեև կարող էր նաև նրա ս-ն ծագած լինել z-ից՝ զենդ. z = սնս. h (hřd) սիրտ։ Հայ. օձ = ելր. anghi-ի կողքին կա նաև իժ = սնս. ahi, էջ։ Մեծ-ը որոշված է ելր. meg և ոչ արիական megh: Այսպիսով արիականները եվրոպականի համեմատությամբ մոտավորապես 3:9 = 1:3 հարաբերություն ունեն։

Ի դեպ, որ արիականի և եվրոպականի միջև նշված տարբերություններից մի քանիսը զուտ պատահականություն կարող են լինել, ցույց է տալիս վերը նշված դեպքը, ուր սնս. asvya = զենդ. havya = հայ. ահեակ ձևին հակադրվում է պրս. cap = skavya: Մյուս տարբերությունները, սակայն, հիմնվում են այն բանի վրա, որ որոշ լեզուներում տարբերակային ձևը կորել է, իսկ մյուս լեզուներում պահպանվում է, ինչպես այդ կարող էր տեղի ունեցած լինել ելր. aki = ար. akshi, ելր. mensa = ար. māsa,⁴⁷ ելր. anghi = ար. aghi-ի դեպքում՝ նկատի ունենալով հայերենը։ Մի այլ մասը հենվում է Ֆիկի սխալ են-

⁴⁴ Նպրս. հանդես է դալիս murdan «մեռնել» mālidan-ի «fricare, terere» կողքին, բայց վերջինը չի ենթադրում հին mal-ը, այլ mard = սնս. mard, հմտ. dil «սիրտ» = zarda, gul «վարդ» = varda, sāl «տարի» = sarda:

⁴⁵ Սակայն եւ դրան կասկածում եմ, քանի որ ցամալ-ի նախնական իմաստը «երկիր» չէ, այլ «շոր» և ց-ն ծ-ից առաջացած համարելը կասկածելի է։ Թերեւս կարելի լինէր ցամալ — սնս. ksham համարել, ինչպես վեց = sveks, սակայն իմաստների նախնական տարբերությունը թույլ չի տալիս նույնացնել այս բառերը:

⁴⁶ Թեև կա նաև աչք, արիական akshi-ից:

⁴⁷ Հմտ. նաև J o h. S c h m i d t. Vocalismus, I, էջ 34:

թաղրությունների վրա, օր. եվր. dhvara=ար. dvara, որտեղ արիական dvara-ն ընդունված է միայն ի սեր սանսկրիտի, քանի որ զենդ. dvara-ն հավասարապես կարելի է հանգեցնել ինչպես dvara-ին, այնպես էլ dhvara-ին: Եվ եվր. gham «երկիր» և արիական gam, jam-ի հակադրումն ինքնին նույնպես կասկածելի է՝ զենդ. zem-ը կարող է ծագած լինել և g'am-ից և gh'am-ից ու նախևառաջ կապվում է սլավ. zem-ի-ya-ին: Սանսկրիտը պետք է միայն շնչելովությունը կորցրած լինի: Եվ նույնքան լավ սլավ. azъ «ես» կարող է ծագած լինել agh'am-ից և մոտենալ զենդ. azem-ին. այդ պատճառով կարիք չկա սլավոնալիտական 1-ին դեմքի դերանունը անջատել արիականից և եվրոպականին մոտեցնել: Կարճ ասած, հնչյունական այս տարբերությունները մեծագույն մասամբ առաջ են եկել առանձին լեզուների ինքնուրույն զարգացման ընթացքում և չեն ապացուցում այն, ինչ Ֆիկը կուզենար, որ ապացուցեին:

4) Վերջին կետը, այսինքն՝ եվրոպական լեզուների հետ հայերենի լեզվական ունեցվածքի հարաբերության հարցը, որ այստեղ պետք էր քննարկել, ևս առաջիմ կթողնեմ, քանի որ հայերեն բառերի մեծագույն մասը դեռևս ստուգաբանորեն պարզաբանված չէ: Վերը շարադրվածից կարելի էր սպասել, որ հայերենում մեծ թվով եվրոպական բառեր պետք է գտնվեին և եթե ես Ֆիկի մոտ որպես եվրոպական նշված բառերից թուցիկ ակնարկով միայն մոտ քսան բառ եմ գտնում հայերենում, ապա այդ հավանաբար բացատրվում է նրանով, որ բառապաշարի առավելապես եվրոպական մասը այսօրվա հայագետների կողմից ավելի քիչ է ուշադրության արժանացել, քանի որ նրանք՝ Պետերմանը, Վինդիշմանը, դր. Լազարդը, Ֆր. Մյուլլերը եղել են արևելագետներ և համենայն դեպս ոչ եվրոպական լեզուների մասնագետներ: Որ եվրոպական բառապաշարի մասնագետի համար հայերենում շատ բան կգտնվի, ևս ցույց կտամ մի օրինակով: Հայերենում կա ցուցական դերանվան ս ածանց, որը նրան կցվող ա-ի հետ միասին հանդես է գալիս որպես ինքնուրույն ցուցական դերանուն՝ սա: Թվում է, կարելի է անմիջապես այս սա-ն նույնացնել սնս. sa-ի հետ, բայց դրան հակասում է հայերենի հնչյունական օրենքը, որի համաձայն սնս. sa պետք է դառնար հա կամ ա: Այդ պատճառով ինձ համար այս ստուգաբանությունը մոլթ էր մնացել, մինչև ես Ֆիկի մոտ (Spracheinheit, էջ 265) չկարդացի, որ k'i ցուցական դերանունը ամբողջությամբ սահմանափակվում է եվրոպական լեզուներով՝ $\kappa\epsilon\tau\upsilon\sigma\varsigma$, $\epsilon\chi\epsilon\tau$, լատ. ce, լիտվ. szis, եկսլ. si, գերմ. hi=սա: Արդ, հայերենի այդ ա-ն հնչյունական օրենքների համաձայն հեշտությամբ կարելի է հավասար դիտել նիւ. k'i-ին, և քանի որ այս k'i-ն եվրոպական k'i-ի հետ հնչյունապես և իմաստով համընկնում է, ապա երկուսն էլ հեշտությամբ կարող ենք նույնացնել: Եվ այսպես հետագա ուսումնասիրությունների միջոցով կարելի կլինի հայերենում բազմաթիվ «եվրոպական» բառերի գոյությունն ապացուցել:

Մեր հետազոտության վերջին մասից անկասկած հայերենի և եվրոպական լեզուների միջև այնպիսի սերտ կապ հաստատվեց, որ ավելի հեշտ կլինեի հայերենը անջատել արիականից, քան եվրոպականից: Սակայն եվրոպական լեզուների մեջ սուլականների պատճառով այն ամենից ավելի մոտ է սլավոնալիտական լեզուներին. որոնց հետ առանձնահատուկ ձևով կապվում է նաև միայն այս երկուսի համար ընդհանուր գործիականի bhւ վերջավորությամբ: Այս պարագայում ծագումնաբանական ծառի կողմնակիցները, ինչպիսին Ֆիկն է, անշուշտ կհակվեին հայերենը ընդհանրապես արիականից անջատելու և զուտ եվրոպական լեզու դարձնելու: Այս տեսակետի դեմ ես ամենից առաջ կարող էի վկայակոչել, որ հայերենը ամբողջությամբ չի մասնակցում a-ի և r-ի տրոհմանը, ինչպես ապացուցում են տասն = dek'an և սունն = k'iaun: Սակայն ես ինքս այդ առարկությունը թույլ եմ համարում, քանի դեռ այն ուրիշ կովաններ չունի: Եվ վերջապես, այս բառերը միայն ցույց են տալիս լեզվի մեջ պատահականության իշխող դերը: Քանի որ երբ մենք միայն լիտվերեն asvā-ի առկայության պատճառով եվրոպ. ձևը պետք է վերականգնենք ak'va փխ. ek'va և միայն լատիներեն quatuor-ի պատճառով՝ եվր. katvar, փխ. ketvar, ապա մենք նաև պետք է հայերենի տասն և սունն ձևերի պատ-

Շատով վերականգնենք ոչ թե եվր. dek'an և k'launi, այլ dek'an և k'rauni և որպես պատահականության խաղ դիտենք այն փաստը, որ բուն եվրոպական լեզուները բոլորն էլ որպես հիմնաձև ունեն dek'an և k'launi: Բայց պատահականություն պետք է համարենք նաև այն, որ 1-ին դեմքի դերանունների մեջ հունարենը, լատիներենը, գոթերենը և հայերենը (էջօ, ego, ik, ես) սլավոնականի և լիտվականի a-ի դիմաց (azu, asz) e ունեն: Բայց այս համապատասխանությունը կարող է պատահական լինել նաև այն դեպքում, երբ բոլոր լեզուները համընկնեն, թեև հենց այդ հավանական չէ: Սակայն այնուամենայնիվ հնարավոր է, որ a-ից e-ի և r-ից l-ի առաջացումը սկզբնապես միայն մի քանի ընդհանուր դեպքերում տեղի ունենար և տարբեր լեզուներում մեկ անգամ ծագելով՝ ինքնուրույն կերպով տարածվեր և երբեմն մեկ, երբեմն մի քանի կամ միաժամանակ բոլոր լեզուներում նույն բառերում առաջ բերեր e-ի և l-ի նորակազմություն: Ես իմ տեսակետի մեջ ավելի շատ հենվում եմ հայերենի և իրանական լեզուների արդեն ապացուցված հնչյունական համապատասխանությունների վրա, որոնց թիվը համեմատաբար ավելի կլիներ, քան ես տվել եմ: Որովհետև շատ հնարավոր է, որ ես առաջին հայացքից որևէ բառ փոխառյալ եմ համարել, երբ այն բուն հայկական է, և անկասկած է, որ ես որևէ բառ այս հետազոտության համար ընդհանրապես որպես նյութ չեմ օգտագործել միայն այն պատճառով, որ ինձ թվացել է, թե իրանական դրոշմ է կրում և այդ պատճառով կասկածելի է, ինչպես օր.՝ շէն, շինել=գենդ. shaya-na «բնակատեղ», գենդ. ski=khski «ապրել, բնակվել», մինչդեռ ես անհրաժեշտ չեմ համարել հավաքել արիական բառերը,⁴⁸ ինչպես կամ, կամք, կամիլ=նպրս. kam, արիական hama, բարի=սնս. bhadra (+ya), ինձ (ինձ)=սնս. simha, «առյուծ», պարտ=f` par=գենդ. par արմատից «մեղանշել, հանցանք գործել», ազդ=հպրս. azda, ալբ-ել=գենդ. atare և բազմաթիվ այլ բառեր: Բայց չէ՞ որ առաջին հերթին անհրաժեշտ է հայերենն առանձնացնել իրանականից և արիականից:

Ըստ այդմ իմ ամբողջ հետազոտության արդյունքը հետևյալն է.

Հայերենը արիա-սլավոնալիտվական լեզուների շրջանում գտնվում է իրանականի և սլավոնալիտվականի միջև:

Եթե հետագա ուսումնասիրությունները այս նախնական եզրակացությունը վերջնական դարձնեն, ապա հնդեվրոպական լեզուների ծագումնաբանական ծառը կազմելու անհնարինությունը համոզիչ կերպով կապացուցվեր: Հայերենը արիա-սլավոնալիտվական լեզուների շղթայում երկու մասերը միացնող մի օղակ կլիներ և ոչ թե մի ճյուղ՝ երկու ճյուղերի միջև: Այդ դեպքում ապա նաև ծագումնաբանական ծառը, որ տապալվել էր Յոհանես Շմիդտի առույգ ուժով, ընդմիջող ընկած կմնար: Բայց եթե հայերենը պետք է իրանական և սլավոնալիտվական, արիական և եվրոպական լեզուների միջև կապող օղակ լինի, ապա այն պետք է, իմ կարծիքով, այս միջնորդող դերը խաղացած լիներ այն ժամանակ, երբ դրանք միմյանց դեռ շատ նման էին, երբ պատմական ժամանակը նրանց միջև այժմ գոյություն ունեցող խիստ սահմանները դեռ չէր գրծել, նրանք ավելի շուտ դեռ միմյանց նկատմամբ բարբառների փոխհարաբերության մեջ էին: Ինչպես վերին իտալական ժողովրդական բարբառները իրենց ռեզային ձայնավորներով, Ա-ի փոխարեն Ա-ով և այլ առանձնահատկություններով մոտենում են ֆրանսերենին, այնպես որ կարելի էր սպասել, որ Փրանսիային սահմանամերձ իտալերենը զրեթե մի միջին բան էր ֆրանսերենի և իտալերենի միջև, այնպես էլ հայերենը կարող էր նախկինում միջանկյալ դիրք գրաված լինել արիական և եվրոպական բարբառների միջև և այդ պատճառով մասն ունենալ երկուսի առանձնահատկություններից էլ: Որովհետև մենք տեսնում ենք, որ Սլավոնայի և Վեդաների հնագրային լեզուները դեռ միմյանց բավական մոտ են, և վերականգնված իրանական և հնդկական նախալեզուները անշուշտ միմյանց նկատմամբ բարբառների պես կհարաբերվեն,

⁴⁸ Եվ իդուր, ինչպես ես, ցավոք, շատ ուշ նկատեցի:

ինչո՞ւ չպետք է նաև եվրոպական լեզուները նախկինում միմյանց հետ այդ հարաբերության մեջ գտնվեին և հայերենն էլ որպես միջանկյալ բարբառ՝ այդ երկու տեսակների միջև: Այսպիսով հեշտությամբ բացատրվում է հայերենի լուրահատուկ երկակի էությունը: Այն բանից հետո, երբ արևմտյան լեզուներում բարձրացավ ա-ի և ր-ի տրոհման և արևելյան բարբառներում՝ ետնալեզվալիներին տրոհման ալիքը, առաջինը դուրս եկավ սլավոնալիտական լեզուների սահմաններից և տարածվեց նաև հայերենի վրա, մինչդեռ երկրորդը անցավ հայերենի վրայով և տարածվեց նաև սլավոնալիտական լեզուների վրա: Առաջին ալիքը, ուղղակի թե միջարկված կերպով, հ.-ե. dakan թվականի ա-ն սլավոնալիտականում փոխարկեց e-ի, իսկ երկրորդը նույն բառի լ.-ն վերածվեց k¹-ի, այնպես որ այժմ հ.-ե. dakan-ի փոխարեն ստացվեց սլավոնալիտական dek¹an հիմնաձևը: Երբ հետագայում արիական լեզուներում ետնալեզվալիներին նոր տրոհման (ետնալեզվալիներ և քմայիներ) ալիքը բարձրացավ, թերևս այն պատճառով, որ ինքնին շատ թույլ էր, կամ բարբառներն սկսել էին միմյանցից ավելի հեռանալ, այն ամբողջությամբ տարածվել կարողացավ միայն իրանականի վրա, իսկ հայերենում՝ սոսկ առանձին շիթերի ձևով, այնպես որ մենք գտնում ենք ինչպես շոrf=catvar, այնպես էլ քինգ=pancan:

Ինչևէ, երբ մենք k, g, gh-ից սանսկրիտի c, j, h-ի և զենդերենի շ, j-ի առաջացումը նույն դիրքերում պետք է դիտենք որպես արիական լեզուների միասնության ապացույց, ապա նաև

հնդեվրոպական	k,	g,	gh-ի փոխարկումը
արիա-հայ-սլ.-լիտվ.	k, ¹	g, ¹	gh ¹ -ի,
այսինքն՝ սնս.	c,	j,	h
զենդ.	s,	z,	z
հայ.	ս (շ, ց),	ծ,	ձ, զ
սլ.	s,	z,	z
լիտվ.	sz,	z,	z-ի

նույնպես պետք է գիտվի արիականի հետ հայ. և սլ.-լիտվ. առնչակցության ապացույց: Հասկանալի է, որ այդ եզրակացության դեմ առանձին լեզուներում հնչյունների աննշան տարբերությունները ոչինչ չեն նշանակում, քանի որ դրանց զոյությունը պայմանավորված է միայն առանձին լեզուներին հատուկ հետագա հնչյունական հակումներով⁴⁹: Այդպես գոթերենը եվր. e-ին հակառակ դնում է i, իսկ եվր. լ-ից առաջացած առանձին լեզուների լ-ն անշուշտ ամենուր նույնը չէ, ինչպես օր. հուն. լ-ն հայերենի տառադարձությամբ միշտ ղ-ով (ստուգաբանորեն՝ ր, այժմ՝ ղ) և ոչ թե լ-ով է արտահայտվում: Երբ մենք այնուհանդերձ այս e-ի և լ-ի օգնությամբ ապացուցում ենք եվրոպական լեզուների նախնական կապը, ապա պետք է նաև սուլականները մեզ արիականի,

⁴⁹ Կարելի է մտածել, ինչպե՞ս է, որ սանսկրիտում s-ն ձայնեղանալու ժամանակ փոխվում է ամեն ինչի, բայց ոչ z-ի, ինչպես նաև յի-ն, որի փոխարեն ի է հանդես գալիս, կարծես արդելված լինի: Ուստի չպետք է զարմանալ, երբ մենք սանսկրիտում նախնական ց¹-ի փոխարեն z չենք գտնում, որից նա ընդհանրապես խուսափում է: Ուշագրավ է, որ իրանականը, հայերենը և սլավոնականը իրենց հնագույն կերպարանքով նախընտրում են ատամնային սուլականներ՝ հակառակ սանսկրիտի քմայիների և լիտվերենի լեզվատառամնայիների, դրանով որևէ բան չապացուցելով այդ լեզուների՝ միմյանց հետ ավելի սերտ առնչության օգտին:

հայերենի և սլավոնալիտականի երբեմնի կապը ապացուցեն: Ինչ ճիշտ է մեկի համար, ճիշտ է նաև մյուսի համար: Եվ վերջապես, որքան մենք դժվարանում ենք արիական քմալիները նախաարիական ետնալեզվայիններից բխեցնել, նույնքան իրավացի ենք, երբ ար.-հայ.-սլ.-լիտ. K^1 , g^1 , gh^1 հնչյունների շարքը, որին մենք հանդեցնում ենք այդ սուրականները, բխեցնում ենք հ.-ե. ետնալեզվայինների շարքից: Ուստի ետնալեզվայինների ճեղքումը տեղի է ունեցել երկու անգամ նմանատիպ եղանակով, սակայն տարբեր ընդգրկումով: Եթե փորձեինք մյուս երկու շարքերն էլ այն եղանակով, ինչպես Ֆիկն է արել K -ի և K^1 -ի վերաբերյալ, քննության առնել հ.-ե. նախալեզվի համար, մեր փաստարկումը խախտո կլիներ և ապացուցված չէր լինի արիականի, հայերենի և սլավոնալիտականի միջև եղած ավելի սերտ կապը և այդպիսով նույնիսկ արիական լեզվախմբում քմալիների համընդհանուր առաջացումը, որին, թեև կիսով չափ, մասնակցել է նաև հայերենը՝

k =	սնս.	c	զնդ.	c	հայ.	չ, ց, ս
g =		j		j, zh		(կ) ժ
gh =		h		j, zh		(զ) ժ,

ոչինչ չէր ապացուցի հնդկա-իրանա-հայկական ավելի սերտ առնչակցության օգտին: Այդ դեպքում սակայն պետք էր նաև արդարացի և հետևողական դատողությամբ անարժեք համարել այն մի քանի փաստերը, որոնցով, ինչպես այն ժամանակվանից կարծում էին, պետք էր միմյանց հետ կապել սլավոնալիտականն ու դերմանականը, ինչպես նաև հունարենն ու լատիներենը, կամ հունաիտալական ու կելտական խմբերը, քանի որ դրանք իսկապես ավելի մեծ արժեք չունեն, քան նրանք, որոնց օգնությամբ կարելի է արիականը սլավոնականի կամ հայերենը այդ երկուսի հետ կապել: Այսպիսով մենք կհանդիսանանք մի երկմտելի տեսակետի, որի դիրքերից կարելի էր ոչինչ չապացուցող համարել այդ եվր. e -ն կամ i -ն, այն է՝ եթե մի լեզվախմբում չպատճառաբանված կերպով որոշակի դեպքերում ետնալեզվայինները դարձել են սուրականներ, ապա նույն հաջողությամբ այլ խմբերում որոշակի դեպքերում չպատճառաբանված կերպով a -ն կարող էր դառնալ e և i -ն՝ ի, կամ երբ հ.-ե. նախալեզվի համար հիմնովին տարբեր երկու K ենք ընդունում, ինչպես նաև չընդունենք ի սկզբանե տարբեր երկու a և i , որոնք նույնքան պատահականորեն արիականում համընկել են, ինչպես այդ կատարվել է եվրոպական լեզուներում Ֆիկի K -ի և K^1 -ի հետ: Որ այս տեսակետն անիմաստ է, ոչ ոք չի ուզենա պնդել, միայն Ֆիկը հակամետ չի լինի այն ընդունելու:

Այս տեսակետից ելնելով նաև հայերենի մասին այլևս նշելու բան չէր մնա, բացի այն, որ նա հնդեվրոպական լեզվաընտանիքի մի առանձին ճյուղ է: Եվ որպես այդպիսին մենք պետք է այն նաև այլ տեսակետից դիտարկենք՝ թե ինչպես պետք է ընկալել նրա հարաբերությունը եվրոպական և իրանական լեզուներին: Ես կուզենայի նաև վերջում նշել, որ ցավոք, հայերենի ստուգաբանական քննությունը դեռ նոր է սկսվում, և մենք աշխատում ենք հայերենի բառապաշարի մի այնպիսի աննշան մասի վրա, որ չի կարելի գուշակել, թե ինչ կհայտնաբերեն հետագա ուսումնասիրությունները, և հավանաբար իրավացի չէր լինի նման անհաստատ հիմքի վրա այնպիսի համարձակ կառույցներ կանգնեցնել, ինչպես արվեց վերը: Ամենից առաջ անհրաժեշտ կլիներ, որ

հայերենից անջատվելին իրանական օտարաբանությունները և ձեռք բերվելը ղուտ հայերեն նյութը: Այս անելուց հետո միայն կարելի է սահմանել հայերենի հնչյունական օրինաչափությունները և, ըստ այդմ, հայերենն իրանական չէ: հետ միացնող կապը ավելի թույլ կամ ամուր կապել: Այդ կապը կարող է թույլ կամ ամուր լինել, բայց անուրանալի է մնում հայերենի անձուկ առնչությունը եվրոպական լեզուների հետ, ինչպես ցույց է տալիս նա. bhi-ով եզակի գործիականի կազմությունը, արիական բնաչիների դիմաց ետնալեզվաչիների մասնակի պահպանումը, ա-ի ճեղքումը ա և e-ի, Դ-ի ճեղքումը Դ և ի-ի: Բառապաշարի համապատասխանությունների և շեղումների մասին առաջիմ ասելու շատ բան չկա, քանի որ մինչև այժմ ոչ հայերենը, ոչ էլ իրանական լեզուները ստուգաբանորեն բավականաչափ հետազոտված չեն: Ուստի այն հարցը, թե բառապաշարի տեսակետից հայերենը իրանականի և սլավոնականի նկատմամբ ինչ դիրք ունի, պետք է լրիվ բաց համարել, ինչպես և ընդհանրապես հ.-ն. լեզուների շրջանում հայերենի դիրքի հարցը մենք ուղում ենք միայն արծարծած և ոչ թե վերջնականապես լուծված համարել:

О ПОЛОЖЕНИИ АРМЯНСКОГО В КРУГУ ИНДОЕВРОПЕЙСКИХ ЯЗЫКОВ

Г. ХЮБШМАН

Резюме

Знаменитая статья известного немецкого армениста Г. Хюбшмана «О положении армянского в кругу индоевропейских языков» имела поворотное значение в арменистике. Она основала теорию о независимом положении армянского языка и наметила дальнейшие пути его сравнительно-исторического изучения. Этот труд и по сей день сохраняет научную ценность и важен, в частности; с точки зрения истории изучения армянского языка. После первой публикации в журнале „Kuhn's Zeitschrift für vergleichende Sprachforschung“ в 1875 г. статья выдержала несколько изданий, однако на армянском языке выходит впервые.